Azg
armenian daily

9 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2000 ՇԱԲԱԹ 159 (2127)

Ցեղասպանության ճանաչման օրինագիծն ԱՄՆ Կոնգրեսն ընդունելու է նախագահական ընտրություններից առաջ

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ: Հազարամյակի գագաթաժողովի շրջանակներում Թուրքիայի նախագահ Սեզերը, ի թիվս տնտեսական, ֆինանսական, նավթային, ինչպես նաեւ Կիպրոսին ու Հունաստանին առնչվող հարցերի, Բիլ Քլինթոնին է դիմել նաեւ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրինագիծը չընդունելու համար գործուն միջոցներ ձեռնարկելու առաջարկով: «Ազատություն» ռադիոկայանի հաղորդմամբ, ըստ որոշ լրատվական աղբյուրների, Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագիծը ԱՄՆ Կոնգրեսն ընդունելու է նախագահական ընտրություններից առաջ:

Ի պատասխան ցեղասպանության մասին ՄԱԿ-ում Քոչարյանի ելույթի, Սեզերն իր ելույթում նշել է, թե պատմաբաններին պետք է թողնել խնդրի լուծումը եւ ցեղասպանության եղած կամ չեղած լինելու առթիվ:

ՆՅՈՒ ՅՈՐՔ, ՄԱԿ-Ի ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

Հայաստան-Ադրբեջան հակամարտությունը ՄԱԿ-ի ամբիոնից

Նույն օրվա ընթացքում, սեպտեմբերի 7-ին, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները կարողացան ՄԱԿ-ի Հազարամյակի գագաթաժողովի շրջանակներում թե գլուխ-գլխի հանդիպել, եւ թե միմյանց մի լավ «տնտղել» Գլխավոր ասամբլեայի 55-րդ նստաշրջանի ամբիոնից: Եվ եթե նրանց առանձնազրույցից, ինչպես միշտ, ոչինչ չպարզվեց, ապա հրապարակային նրանց ելույթները բեւեռայնորեն հակադիր էին միմյանց, եւ մեկ անգամ եւս երեւան հանեցին Ղարաբաղի հակամարտության հարցում նրանց միջեւ առկա սկզբունքային տարբերությունները: Բոլոր դեպքերում, հակասությունների սրման «առաջնությունը» պատկանում էր Հեյդար Ալիեւին, որը առաջինը խոսելով Լեռնային Ղարաբաղի հարցի մասին, մեկ անգամ եւս ընդգծեց իր ավանդական տրտունջը՝ Հայաստանն ագրեսոր է, օկուպացրել է Լեռնային Ղարաբաղը, էթնիկական զտման է ենթարկել 1 մլն ադրբեջանցիներին: ՄԱԿ-ը պետք է ամեն գնով նպաստի Բաքվին՝ տարածքներին վերաշիրակալու գործում, ոչ թե հույս չունենա, որ հարցի չլուծման հետեւանքով ստեղծված անկայունության պայմաններում օգտակար հանածոներով հարուստ Կասպից ծովի առափնյա շրջանից որեւէ շահ կստանա:

Բնականաբար, ելույթ ունենալով միշտ հետո, Հայաստանի նախագահը պետք է անպատասխան չթողներ Ալիեւի զրպարտությունները: Իր ճառում Ռ. Քոչարյանը շեշտեց, որ Լեռնային Ղարաբաղի շուրջ այսօր ստեղծված իրավիճակն իրականում հետեւանք է 1991-92 թթ. հայ ազգաբնակչության էթնիկական զտման նպատակով Ադրբեջանի իրականացրած ագրեսիայի, իսկ այդ իրավիճակի շարունակումն արդյունք է Ադրբեջանի կողմից հակամարտության կարգավորման վերաբերյալ միջնորդ կողմերի վերջին առաջարկությունների մերժման: Նա հարցի լուծման շրջանակները ՄԱԿ-ից նրբորեն փոխադրելով ԵԱՀԿ եւ ԱՊՀ շրջանակներ, այնտեղից անցում կատարեց դեպի Հարավային Կովկասում անվտանգության համակարգի ձեւավորման իր սիրելի գաղափարը: Ինչ վերաբերում է հակամարտության կարգավորման սկզբունքային ելակետին, ապա Քոչարյանի խոսքն այստեղ հստակ էր եւ հստակ՝ լուծումն իրագործելի է միայն կողմերի իրավահավասարության հիման վրա, եւ ջանքերն ավելի արդյունավետ կլինեին, եթե Բաքուն այդ սկզբունքով ուղղակի բանակցության նստեր Լեռնային Ղարաբաղի հետ, որը, շեշտեց Հայաստանի ներկա եւ Ղարաբաղի նախկին նախագահը, դե ֆակտո կայացած պետություն է եւ պատրաստ է երկխոսության:



Տես էջ 8

ԱՄՆ

Թուրք-հրեական ընդհանուր ճակատ հայերի դեմ

ԱՆԿԱՐԱ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ: Թուրքական «Ռադիկալ» թերթը մանրամասներ է հաղորդել ԱՄՆ Հրեական կոմիտեի հետ Թուրքիայի նախագահ Սեզերի հանդիպման ժամանակ հայկական կազմակերպությունների նախաձեռնությունների դեմ պայքարելու հարցի քննարկման մասին: Թերթի «Ընդհանուր ճակատ հայկական կազմակերպությունների դեմ» խորագրով հոդվածում նշվում է, որ Սեզերն իր ելույթում նշել է, թե «ԱՄՆ հրեական եւ թուրքական կազմակերպությունները մեծ ներդրում ունեն հակաթուրքական գործունեություն ծավալած ինչ-ինչ կազմակերպությունների դիմագրավելու գործում եւ հույս հայտնել, որ այս գործակցությունը կշարունակվի»: Թուրքիայի նախագահն ամերիկաբնակ հրեաներին կոչ է արել նաեւ նպաստել Թուրքիա-ԱՄՆ-Իսրայել ռազմավարական համագործակցության ամրապնդմանը: Ըստ թերթի, Սեզերն իր խոսքում հիշեցրել է, որ այսօրվա հրեաների պապերը ժամանակին փախչելով իսպանական ինկվիզիցիայից, հաստատվել են Օսմանյան կայսրությունում, իսկ ավելի ուշ ֆաշիստական վարչակազմի օրերին Թուրքիան ապաստան է տվել Եվրոպայից փախած մեծ թվով հրեաների:

Կալինինգրադում ԴԱՎ-ից մահացել է Նիկոլայ Կոլեսնիկովը

ԵՐԵՎԱՆ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ: «Փայմ նյուս» գործակալությունը ռուսական լրատվամիջոցների վկայակոչմամբ հաղորդում է, որ Կալինինգրադի կլինիկաներից մեկում մահացել է Նիկոլայ Կոլեսնիկովը, որը ԴԱՎ-ից բուժվելու կուրս էր անցել «Արմենիկում» դեղամիջոցի օգնությամբ: Համաձայն գործակալության, «Արմենիկումը» սուզման ժամանակ պարզվել է, որ այն սովորական իմունոմոդուլյատոր էի եւ չի ազդում վիրուսի վրա, որը, ինչպես հայտարարել են կալինինգրադցի բժիշկները, շարունակում է բազմանալ հիվանդի օրգանիզմի բջիջներում: Ավելի վաղ գերմանացի բժիշկները, որոնք հետազոտել էին Կոլեսնիկովին, հանգել էին այն եզրակացության, որ հայ բժիշկներին չի հաջողվել կասեցնել հիվանդությունը:

«Արմենիկում» կենտրոնից «Նոյյան տաղան»-ին հայտնեցին, որ իրենք նման տեղեկություն չունեն:

Հոգեւոր առաջնորդների համաշխարհային ժողովին Թուրքիայից պատվիրակ չի հրավիրվել

ԱՆԿԱՐԱ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ: Ըստ թուրքական «Հյուրիեթ» թերթի, 90 պետությունների 2000 ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացված Աշխարհի եկեղեցիների եւ հոգեւոր առաջնորդների գագաթաժողովին Թուրքիայից ոչ մի պատվիրակ չի հրավիրվել: Թերթն այս կարգակցությամբ իր վրդովմունքն է հայտնել, քանի որ Թուրքիան 65 մլն. բնակչությամբ մահմեդական պետություն է, Իսլամական համաժողով կազմակերպության անդամ է, եւ դրա հետ մեկտեղ նշված կազմակերպության հնարավոր նախագահներից մեկը: Պաշտոնական Անկարային էլ ավելի է զայրացրել այն հանգամանքը, որ համաժողովին ներկա է գտնվել Թուրքիայի խորհրդարանի նախկին պատգամավոր Սերվե Քավաֆչը, որն ընդդիմադիր իսլամիստական «Բարություն» կուսակցության անդամ է եւ իշխանությունների հետ հակասությունների պատճառով վտարվել է Թուրքիայից: Համաժողովում Քավաֆչը ներկայացրել է ԱՄՆ-ի մահմեդականներին: Ըստ «Ռադիկալի», Թուրքիայում կան մեծ հեղինակության տեր հոգեւոր գործիչներ, որոնց թվում կրոնական գործերի պետնախարար Մեհմեդ Նուրի Յըլմազը, որն աշխատում է իսլամական ուսմունքներում բարեփոխումներ կատարելու ուղղությամբ:

«Կուրսկի» կործանման նոր վարկած

ԲԵՌԼԻՆ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ: «Կուրսկ» ատոմային սուզանավի աղետի հերթական վարկածն է ներկայացված գերմանական «Բեռլիներ ցայտունգ» թերթում: Հոդվածի համաձայն, օգոստոսի 31-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին է ներկայացվել ԱՊԾ զեկույցը ատոմային «Կուրսկ» սուզանավի աղետի պատճառների վերաբերյալ: Հոդվածի հեղինակները հայտարարում են, որ իրենց ունեցած տեղեկություններով զեկույցում այն եզրակացությունն է արվում, որ «Կուրսկի» վրա զորավարժությունների ժամանակ ընկել է հականավային նոր «Գրանիտ» հրթիռ, որ արձակվել է «Պյոտր Վելիկի» հածանավից: Աղետի պատճառները հետաքննող հանձնաժողովը գլխավորում էր ԱՊԾ տնօրեն Նիկոլայ Պատրուշեւը, ասվում է հոդվածում: ԱՊԾ ներկայացուցիչը «Բեռլիներ ցայտունգի» թղթակցին հայտարարել է, որ իրեն ոչինչ հայտնի չէ նման զեկույցի գոյության մասին:

ԲԵՆԶԻՆ

Համաշխարհային շուկայում 1 բարել նավթն արժե 37 դոլար

Հայաստանյան շուկան անտարբեր է գների նման թռիչքին

Նավթ արդյունահանող երկրների կազմակերպությունը (ՕՊԵԿ) միայն սեպտեմբերի 10-ին որոշում կկայացնի՝ ավելացնե՞լ նավթի արդյունահանումը համաշխարհային շուկա, թե՝ ոչ: Իսկ մինչ այդ համաշխարհային շուկայում գներն օր-օրի բանկանում են: Փորձագետների կարծիքով, եթե նույնիսկ ՕՊԵԿ-ը օրական 500 հազար բարելով ավելացնի արտահանումը, ապա գները, միեւնույն է, չեն իջնի: Ներկա պահին զուտ ֆիզիկապես նախատեսվածից ավելի նավթ կարող են արտահանել ՕՊԵԿ-ի անդամ Քուվեյթը եւ Սաուդյան Արաբիան: Տարեվերջին նրանց կարող են միանալ կազմակերպության անդամ այլ երկրներ: Ենթադրաբար հենց սա է պատճառը, որ ՕՊԵԿ-ի ներսում նավթի նախատեսվածից ավել արտահանելու շուրջ տարբեր երկրների միջեւ կան տարաձայնություններ: Յուրաքանչյուրը փորձում է օգտագործել հարմար պահը եւ հարստացնել սեփական գանձարանը:

ՕՊԵԿ-ին չանդամակցող, սակայն նավթ արդյունահանող այլ երկրներ, ինչպես Ռուսաստանը, Նորվեգիան, Մեքսիկան եւ Մեծ Բրիտանիան եւս կարող են ավելացնել նավթի առաքումը համաշխարհային շուկա:

Համաշխարհային շուկայում նավթի գների բարձրացումը ուղղակիորեն պետք է որ ազդի Հայաստանում բենզինի գների վրա: Սակայն, պարզվում է, որ այդպես չէ: Մասնավորապես Հայաստան բենզին ներկրող «Միկա-Լիմիթդ» ընկերության տնօրենությունից «Ազգին» ի պատասխան տեղեկացրին, թե իրենք գիտեն՝ ումից նավթ գնել, ինչ ֆանկներով գնել, ինչ տեսակներ ներկրել: Մեզ վստահեցրին, որ այս պահին Հայաստանում կա նախկինում ներկրված բենզինի այնքիսի պաշար, որը հնարավորություն է տալիս առնվազն մեկ ամիս, անկախ նրանից, թե ինչպիսին կլինեն նավթի գները համաշխարհային շուկայում, պահպանել 20 լիտրը 10-10,5 դոլարի սահմաններում:

Զգացված ենք ընկերության՝ ժողովրդի նկատմամբ ունեցած այս վերաբերմունքից, հույս ունենալով, սակայն, որ պետեկամուտների նախարար Գագիկ Պողոսյանը հաջորդ ամիսներին «Միկա-Լիմիթդ»-ի ներկայացնի անբարեխիղճ վարկատուների շարքում:

Ն. Ս.

ԸՆԹԱՑԻԿ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Պեֆխորհո՞ւրդ, թե՞ Քաղխորհուրդ

Օրերս Վլադիմիր Պուտինի հրամանագրով կյանքի կոչվեց ՌԴ Պեֆխորհուրդը, ինչը ռուսասանյան մամուլը որակեց որպես նահանգապետներին ու այլ տեղական իշխանության առաջնորդներին շնորհվող սփոփիչ մրցանակ Դաշնային ժողովում տեղն ու դիրքը կորցնելու դիմաց:

Թվում է, ղեկավարները սփոփվեցին չգնվեց գեթ մեկը, ով դեմ լինի ՌԴ նախագահի նորամուծությանը: Ըստ ռուսասանյան վերլուծաբանների, տեղական ղեկավարներին ոգեւորեց այն հանգամանքը, որ Պեֆխորհուրդը ստեղծվեց ոչ թե Պուտինին կից, այլ նրա ղեկավարության ներքո: Թեեւ նոր իշխանական ատյանի կարգավիճակը խորհրդատվական է, այնուհանդերձ լծակները չափազանց տպավորիչ են նահանգապետներն ու դաշնային միավորների այլ ղեկավարները հնարավորություն ստացան անմիջականորեն, առանց Կրեմլի տարբեր կարգի միջնորդների կամ տարածաշրջանային տեղապահների, առնչվել պետության ղեկավարի հետ:

Պեֆխորհրդի ստեղծմամբ Ռուսասանում փաստորեն վերացավ ինտրիգներ ստեղծող, ինտրիգների մասնակցող, ընդմիշտ դիմակայության հակված եւս մի իշխանավոր օղակ: Սրանով իսկ իշխանության ուղղաձիգը էլ ավելի ուղղաձգվեց, պետականությունն էլ ավելի ամրապնդվեց:

Բայց անցնենք մեր գործերին: Փոքր տարածքը, սակավ տեղական ռեսուրսները, տեղական ինքնակառավարման մարմինների եւ ընտրությունների մասին անկատար օրենքներն իսպառ բացառում են հայաստանյան մարզպետների քաղաքական ու տնտեսական ինքնավարությունը: Սակայն մեր պետությունն էլ կուսակցությունների բազմաձայնության, քաղաքական կյանքի գերակտիվության ու խայտաբղետության ախտով է տառապում: Ստեղծված իրավիճակում փոքր տարածքն ու ժողովրդի ծանր սոցիալական պայմանները նույն կրակայրիչի դերն են խաղում, ինչ Ռուսասանում տեղական ու պալատական ինտրիգները: Անգամ Սաղոյանի, Խորեն Թոչունիչի կամ այլ ամբոխավար գործիչների ջանքերով հնարավոր է ալեկոծել ողջ հանրապետությունը, ինչի հետեւանքները պետությունն ու ժողովուրդը մարսում են տարիներով:

Արդյոք ճի՞շտ էր ՀՀ Քաղխորհրդի լուծարումը: Արդյոք անհրաժեշտ չէ՞ր նրա գործունեությունը ոչ թե ՀՀ նախագահին առընթեր, այլ անմիջական ղեկավարությամբ: Առավել եւս այն պարագայում, երբ ՀՀ ներկայիս նախագահը փաստորեն անձնուրաց քաղաքական աջակիցներ չունի:

Թվում է, Քաղխորհուրդը կկատարեր Ազգային անվտանգության խորհրդի դերը քաղաքական դաշտում, ոչ միայն ուղղորդելով ու սրբագրելով քաղաքական զարգացումները, կանխարգելելով քաղաքական ճգնաժամերը, այլեւ կանոնակարգելով քաղաքական դաշտն ու խաղի կանոններն այստեղ: Սրանով իսկ պահի դրդմամբ կամ պատվերով ստեղծված ու չափազանց աղմկոտ կուսխմբակները դաշտից ինքնըստինքյան դուրս կմղվեին ազդեցության ոլորտի ու տարբեր կարգի լծակների իսպառ բացակայության պատճառով:

Հմայակի կուրսով՝ առանց Հմայակի

Անվերջ լուրեր են դրսվում, թե Աժ խոսնակ Արմեն Խաչատրյանի գահընկեցության հարցը գրեթե որոշված է: Անգամ ժամկետներն են ճշտվել՝ աշնանային նստաշրջանի առաջին կամ երկրորդ եռօրյան:

Դրն խոսնակը համառորեն մերժում է պատշոնավարության այսքան արագ ու տխուր վերջաբանը, մատնացույց անելով Սահմանադրությունը, Աժ կանոնակարգն ու այլ օրենքներ: Սակայն, ըստ լուրերի, ՀԺԿ-ի ղեկավար Ստեփան Դեմիրճյանի վերջին շրջանի հաճախակի այցերը վարչապետ Անդրանիկ Մարգարյանին լոկ ընկերական հանդիպումների առիթ չեն: ՀԺԿ-ի մտադրությունը՝ չլքել «Միասնությունը», ինչպես հայտնի է, ՀՀԿ-ն միանշանակ չի ընդունում՝ գործընկերոջ հանդեպ հավատը զգալիորեն խաթարվել է, ՀԺԿ-ի որոնախորշն էլ պատրաստ է զբաղեցնել «Կայունությունը»:

Սխալների համար վճարել է պետք, աջակցության համար՝ խրախուսել: Այս առումով Արմեն Խաչատրյանի պատշոնաթողությունը շատ հարցերի լուծում է խոստանում. հանրապետականներն էլ ավելի անխոցելի կդառնան, տիրույթում ունենալով նաեւ խոսնակի աթոռը, «Կայունությունն» էլ, տիրանալով փոխխոսնակի պատշոնին, դե յուրե կհաստատի խորհրդարանական երկրորդ ուժի կարգավիճակը:

Նման լուծմանը, ըստ երեւույթին, ոչ ոք չի ընդդիմանա, բացի անցյուղ արտասահմանյան վոյաժներից ու ճոճռան ճառերից, ներկայիս Աժ խոսնակն այլ կարողություններ չդրսեւորեց: Ի պատշոնե «հանրապետության երկրորդ մարդը» ո՛չ պետական շինարարությանն աջակցեց, ո՛չ էլ քաղաքական ճգնաժամի հանգուցալուծմանը: Այնպես որ շատ հավանական է, որ դրն Խաչատրյանի պատշոնից հեռանալու տարբերակն ի նպաստ ՀԺԿ նախարարների ու մանր պատշոնյաների անձեռնմխելիության լինի: Սակայն ոչ առաջին կամ երկրորդ եռօրյաներին: Մոտենում է Հայաստանում կայանալիք ու Հայաստանի նախագահությամբ Սեւծովյան տնտեսական համագործակցության անդամ երկրների հերթական խորհրդարանական վեհաժողովը: Այս իրավիճակում Աժ խոսնակ փոխելը ոչ մի երկրին հարիր չէ:

Ինչեւիցե, ՀԺԿ-ի հետ կապված վերջին շրջանի քաղաքական զարգացումները եւս մեկ անգամ ապացուցեցին կուսակցությունից վտարված Հմայակ Հովհաննիսյանի գնահատականների, դիրքորոշման ու քննադատությունների արժանահավատությունը: Ասում էր, չէ՞, Արմեն Խաչատրյանը վատ խոսնակ է, ՀԺԿ-ն սխալ ուղու վրա է: Հիմա, կարծես, սխալներն ուղղվում են՝ ՀԺԿ-ն վերադառնում է Հմայակ Հովհաննիսյանի դիրքերին: Ափսո՞ս, առանց Հմայակի:

ՉԱՐՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Բուժիմնարկների լայնածավալ սեփականաշնորհում չի նախատեսվում

ԵՐԵՎԱՆ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հանրապետության բժշկական հաստատությունների լայնածավալ սեփականաշնորհում չի նախատեսվում: Սեփականաշնորհման ենթակա բուժհիմնարկների ցանկում ավելացել է միայն հանրապետական մանկական օրթոպեդիկ հիվանդանոցը: Հաղորդելով այդ մասին, նախարարի խորհրդական Հովհաննես Մարգարյանցը նշեց, որ մի ամբողջ շարք այնպիսի բուժհիմնարկներ, ինչպիսիք են հիգիենայի եւ հակահամաճարակաբանական կենտրոնները, ինֆեկցիոն հիվանդանոցները, դիսպանսերները, արյան փոխներարկման ծառայության կայաններն ու կենտրոնները, կրթական հաստատությունները, դաստաբժշկական փորձաքննության հիմնարկները եւ մի քանի այլ հաստատություններ չեն սեփականաշնորհվելու: Միեւնույն ժամանակ Հ. Մարգարյանցն ընդգծեց, որ սեփականաշնորհման են ենթակա բոլոր ստոմատոլոգիական հաստատությունները:

Հ. Մարգարյանցը նշեց, որ հիմնական արտոնությունները սեփականաշնորհելիս տրվում են կոլեկտիվին, սակայն ներգրավվում են եւ արտաքին ներդնողներ: Օրինակ, պրոկտոլոգիայի ինստիտուտը սեփականաշնորհելիս արտաքին ներդնող դարձավ Հայ բարեգործական ընդհանուր միությունը:

Ըստ Հ. Մարգարյանցի, արդեն սեփականաշնորհված բուժհիմնարկները, ի տարբերություն արդյունաբերական ձեռնարկությունների, ոչ միայն չդադարեցրին իրենց գործունեությունը, այլեւ հնարավորություն ստացան այն ընդլայնելու: Նա ընդգծեց, որ սեփականաշնորհված հաստատությունների բժշկական ուղղվածությունը պահպանելու միտումը պաշտպանվում է նախարարության ղեկավարության կողմից: Մասնավորապես, պետպատվերի տեղադրումը կատարվում է հավասարապես պետական եւ սեփականաշնորհված բուժհիմնարկների միջեւ:

Ներկայումս սեփականաշնորհված են Կոսմետոլոգիայի եւ պլաստիկ վիրահատության հանրապետական կենտրոնը, Ծաղկաձորի մանկական առողջարանը, Արտաշատի ստոմատոլոգիական պոլիկլինիկան, Ջերմուկի առողջարանը, Պրոկտոլոգիայի ինստիտուտը, Հանրապետական ստոմատոլոգիական կենտրոնը, «Բուժտեխնիկան», «Հայդեղագործությունը», «Արաբկիր» մանկական կենտրոնը, թիվ 4 եւ թիվ 5 Երեւանի ստոմատոլոգիական պոլիկլինիկաները:

Սեփականաշնորհման են ենթակա Միխայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտը, Կուրորտաբանության եւ ֆիզիոթերապիայի ինստիտուտը, Հանրապետական կլինիկական ակնաբուժական հիվանդանոցը, Աղի հանքի հանրապետական հիվանդանոցը, Հանրապետական մանկական կլինիկական հիվանդանոցը, հանրապետական մանկական օրթոպեդիկ հիվանդանոցը, «Տեխնոդենտը» եւ «Արմադենտը», Երեւանի թիվ 1, 2, 3, 6, 8, 9 ստոմատոլոգիական պոլիկլինիկաները:

Նոր Այնթապը՝ նման պատմականին

Բացվեց Բյուզանդ Մարգարյանի անվան դպրոցը

Սեպտեմբերի 8-ին Արարատի մարզի Այնթապ գյուղի Բյուզանդ Մարգարյան ուսումնական հաստատության բացումն էր: Դպրոցն այդպես է անվանվել լիբանանահայ բարերար Բյուզանդ Մարգարյանի պատվին՝ 1999 թվականի դեկտեմբերի 15-ին, կրթության բաժնի վարիչի որոշմամբ:

Բացման խոսքում տնօրեն Ալվարդ Սահակյանը նախ շնորհավորեց բոլոր ուսուցիչներին ու աշակերտներին՝ դպրոցի վերակառուցման առթիվ: Նա շնորհակալություն հայտնեց «Այնթապ» հայրենակցական միության անդամ, բարերար Բյուզանդ Մարգարյանին այս հայրենանվեր գործի համար:

«Դպրոց կառուցելը, ասաց, աշխարհի ամենամեծ գործն է: Դպրոցը պիտի այնպիսին լինի, որ թե՛ ուսուցիչը, թե՛ աշակերտը հաճույքով ներս մտնեն: Երջանիկ եմ, որ ճանաչել եմ Բյուզանդ Մարգարյանին: Նա ավարտել է կյանքի համալսարանը, եւ ես այսօր շատ բան ունեմ նրանից սովորելու»:

Դպրոցի վերանորոգման համար տրամադրված է 180.000 ԱՄՆ դոլար: Աշխատանքները սկսվել են գարնանից: Վերանորոգվել են դպրոցի երեք մասնաշենքերը: Ծրագրված էր աշխատանքներն ավարտել հուլիսի 1-ին, բայց դեռ ամեն ինչ չէ, որ ավարտված է: «Այնթապ» հայրենակցական միության անդամ Եղիա Ասուրյանն էլ պատրաստվում է դպրոցի տարածքը պարապատել:

Իր խոսքում պարոն Բյուզանդ Մարգարյանը նշեց, որ ցանկանում է այս Նոր Այնթապը պատմական Այնթապի նման տեսնել՝ եկեղեցով, զբոսայգով, առեւտրի կենտրոնով: Պատմական Այնթապը հայտնի է եղել նաեւ իր ոլորջով: Բարերարը հույս հայտնեց, որ մոտ տասը տարվա ընթացքում Այնթապը կնմանվի պատմականին:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

Օգոստոսին Հայաստան է ներկրվել 21 հազար տոննա բենզին

ԵՐԵՎԱՆ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ընթացիկ տարվա օգոստոս ամսին նախորդ ամիսների համեմատությամբ աճել են բենզինի ներկրման ծավալները՝ կազմելով 21 հազար տոննա (բյուջեով նախատեսված է 22 հազար տոննա): Օգոստոսին ներկրվել է 6 443 տոննա դիզելային վառելիք, 4 290 տոննա ավիանավթ, 1 259 տոննա հում նավթ, 1673 տոննա հեղուկ գազ: Ի դեպ, այդ ընթացքում Հայաստան նավթ չի ներկրվել:

75-ամյա գեսահովիտցին չէր էլ անցել սահմանը

ՏԱՎՈՒՇ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Իջեւանում լուրեր էին տարածվել, թե Գեսահովիտ գյուղի 75-ամյա բնակիչ Նիկոլ Շիբուխյանն անցել է Ադրբեջանի տարածք եւ 10 օր այնտեղ է գտնվել: «Նոյյան տապանի» թղթակիցն այդ կապակցությամբ դիմեց ՀՀ ազգային անվտանգության նախարարության Տավուշի մարզային վարչություն, որի աշխատակիցներից մեկը՝ Պետրոսյան ազգանունով, հայտնեց, որ իրենք զբաղվել են վերոհիշյալ գործով: Նրա վկայությամբ, Շիբուխյանի հետ զույգներից պարզվել է, որ վերջինս իրականում չի անցել Ադրբեջանի սահմանը, եւ կեղծ հայտարարության դրդապատճառը եղել է այն, որ Շիբուխյանը ցանկացել է այդ ձեւով ուշադրություն հրավիրել իր վրա եւ աշխատանքի տեղավորել աղջկան ու թոռանը: Նիկոլ Շիբուխյանի որդին՝ Լյուբիկը, Տավուշի մարզպետի օգնականն է: «Արդյոք ճիշտ չէ՞ր լինի Լյուբիկի միջոցով նրանց աշխատանքի տեղավորել», այս հարցին ԱԱՆ մարզային վարչության աշխատակիցը պատասխանեց, որ Ն. Շիբուխյանը վատ հարաբերությունների մեջ է որդու հետ:

Համայնքների վարչությունը 1700-ամյակի տոնակատարություններին ընդառաջ

Սեպտեմբերի 8-ին Հայաստանի համայնքների միության վարչությունը լսեց քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն ընդունման 1700-ամյակի տոնակատարությունների Հայաստանի համայնքների միության վարչության հայեցակարգը, ինչպես նաեւ միության հանրապետական խորհուրդ հրավիրելու հարցը:

Որոշվեց սեպտեմբերի 29-ին անցկացնել Հայաստանի համայնքների միության հանրապետական խորհրդի նիստ: Ընդունվեց 1700-ամյակի կապակցությամբ ներկայացված կոնցեպցիան: Նշվեց, որ ստեղծվել է հանձնախումբ, ուր ընդգրկված են հանրապետությունում հայտնի արվեստի, մշակույթի եւ այլ գործիչներ:

Նախաձեռնության հեղինակ, էջմիածնի քաղաքապետ Երվանդ Աղվանյանը նշեց, որ արդեն պատրաստ է միջոցառումների նախնական տարբերակը: Վարչությունը համայնքապետներին կոչ արեց այսօրվանից 2001 թ. տեղական բյուջեներում գումարներ նախատեսել տոնակատարությունների միջոցառումների համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 80 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ԶՕՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Նյութը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

Իրաքի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները եւ բեռնաթափումները մնում են ուժի մեջ: 1996 թ. իրաքցի 25 մլն ժողովրդի կարիքները մասամբ թեթեւացնելու նպատակով ՄԱԿ-ը ծեռնամուխ եղավ «Նավթ պարենի դիմաց» ծրագրի իրականացմանը, որը թույլատրում է որոշակի քանակով Իրաքից նավթ արտահանել, ցել տնտեսաճառ-ցուցահանդեսին, ներկայացնել արտադրատեսակներ, համաթատասխան գործընկեր գտնելու դեպքում հենց տեղում կնքվում է պայմանագիր, որի մեկ պատճենը ուղարկվում է Իրաքի կառավարական խողովակներով) ՄԱԿ-ի 661-րդ կոմիտե, մեկ պատճենը համաթատասխան երկրի արտգործնախարարություն: Այս ամենը իրականացվում է ՄԱԿ-ի շրջանակներում:

Յուրաքանչյուր գործարքի համար կա մեկ հիմնական սահմանափակում: Այս տարի ՄԱԿ-ը թույլատրել է Իրաքի կառավարությանը «Նավթ պարենի դիմաց» ծրագրի շրջանակներում կնքել ընդհանուր արժողությամբ ոչ ավելի, քան 5 մլրդ 600 մլն ԱՄՆ դոլարի պրանքաշրջանառություն, այսինքն Իրաքի կառավարությունը ՄԱԿ-ի նյութական գրասենյակ է ներկայացրել պայմանագրեր, որոնց գումարային արժեքը չի գերազանցելում 5,6 մլրդ դոլարը: Իրաք ներմուծվող (թույլատրվող) պրանքների դիմաց այս երկրի կառավարությունը առաքում է նավթ կամ կայուն արտարժույթ, որը ՄԱԿ-ի համաթատասխան խողովակով փոխանցվում է, ենթադրենք, հանքային ջրերի «Բջնի» գործարան: Այսինքն, գործարքը իրականացվում է ուղիղ ծեւով (օրինակ՝ «Բջնի» գործարան-Իրաքի N ֆիրմա), վճարումը ՄԱԿ-ի միջոցով:

Հայաստանի մասնակցությունը «Նավթ պարենի դիմաց» ծրագրին չափազանց պասիվ է: Դեռ 1997 թ. ՀՀ Ազգային ակադեմիայի դոկտորանտ Արային Սարգսյանը մասնակցել է Բաղդադի ցուցահանդես-վաճառքին, ներկայացրել արդյունաբերական արտադրանքը, իսկ 1999-ին պարգեւատրվել է արծաթե մեդալով: Նրա ասելով, Իրաքում մեծ պահանջարկ ունի Հայաստանի հանքային ջուրը, իսկ «Բջնին» ներկայացրել է անձամբ: Իրաքի շուկայում հայկական հանքային ջրի մրցակիցը թուրքական «Հայաթ» ջուրն է: Այս երկրում հնարավոր է ամսական իրացնել 40 ծովային կոնտեյներ հանքային ջուր, որը գումարային առումով հավասար է 1 մլն ԱՄՆ դոլարի, տարեկան 12 մլն: Սա Հայաստանի համար փոքր գումար չէ, մանավանդ հայկական ջուրը գերազանցում է թուրքականին:

Հայկական արտադրանքի իրացման լայն հնարավորություններ կան Իրաքի շուկաներում

դրա դիմաց ներմուծել սննդամթերք, դեղորայք, այլ թույլատրելի արտադրատեսակներ:

Այս տարվա նոյեմբերի 1-10-ը Բաղդադում անց է կացվելու 33-րդ միջազգային տնտեսաճառը, որին, ինչպես գրել էր «Ազգը» երեկվա համարում, հրավիրված է նաեւ Հայաստանը, ի դեմս ՀՀ Ազգային ակադեմիայի դոկտորանտ Արային Սարգսյանի: Իրաքում նման տնտեսաճառ անց է կացվում 60-ական թթ., 1991-97 թթ. չի կազմակերպվել հայտնի պատճառներով: 1997 թ. աշնանը միջազգային տնտեսաճառը վերաբացվել է, եւ այդ ժամանակից Հայաստանը երեք անգամ մասնակցել է:

Միջազգային տնտեսաճառին մասնակցում են աշխարհի տարբեր երկրների ձեռներեցներ (Իրան, Ռուսաստան, Իսպանիա, Իտալիա, Ինդոնեզիա եւ այլն), որոնք ներկայացնում են իրենց երկրների արտադրանքները: Տնտեսաճառ-ցուցահանդեսի հիմնական նպատակն է ներկայացնել արտադրատեսակներ, որոնց հաջողության դեպքում կնքվում է համաթատասխան պայմանագիր «Նավթ պարենի դիմաց» ծրագրի շրջանակներում:

ՄԱԿ-ի «Նավթ պարենի դիմաց» ծրագիրը մանրամասնորեն ներկայացված է ինտերնետում: Հայ գործարարները, առեւտրականները կարող են ուսումնասիրել այն արտրանքների ցանկը, որոնց կարիքն այսօր ունի Իրաքը: Հաջողության հասնելու նպատակով անհրաժեշտ է մասնակցել տնտեսաճառին, ներկայացնել արտադրատեսակներ, համաթատասխան գործընկեր գտնելու դեպքում հենց տեղում կնքվում է պայմանագիր, որի մեկ պատճենը ուղարկվում է (Իրաքի կառավարական խողովակներով) ՄԱԿ-ի 661-րդ կոմիտե, մեկ պատճենը համաթատասխան երկրի արտգործնախարարություն: Այս ամենը իրականացվում է ՄԱԿ-ի շրջանակներում:

Բայց միայն հանքային ջուրը չէ: Ինտերնետ ցանցում ներկայացված են մի քանի հազար արտրանքատեսակներ, որոնց կարիքն այսօր ունի Իրաքի ժողովուրդը: Հայաստանը մեծ հաջողությամբ կարող է իրացնել սնունդ, էլեկտրատեխնիկա, թեթեւ արդյունաբերական արտրանքներ, ինչպես նշեցինք հանքային ջուր, այլ արտրանքներ:

Իրաքի շրջափակումը իրականացնում են ոչ միայն Պարսից ծոցում տեղակայված 6-րդ նավատորմը, այլեւ համաշխարհային լրատվամիջոցները: Գրվում է, չէ՞, թե նախագահ Սադդամ Հուսեյնը մարդասպան է: Սակայն մի բան է քարոզչությունը, այլ բան՝ իրականությունը:

Իրաքը Հայաստանից հեռու չէ, ընդամենը 700 կմ: Նա փակ երկիր չէ, իսկ Բաղդադի ցուցահանդես-տնտեսաճառում հաջողության հասնելու դեպքում Հայաստանից արտրանքատեսակները կարելի է Իրաք տեղափոխել մի քանի ճանապարհներով, որոնցից ամենաէժանը եւ արագահովը Իրանի տարածքով է անցնում:

Ավելացնեմ՝ Հայաստանը եւ Իրաքը երկու ամիս առաջ հաստատել են դիվանագիտական հարաբերություններ, մեր երկիրը Բաղդադում ներկայացված է ժամանակավոր հավատարմատարով (Մուրադ Մխիթարյան) եւ հյուրատոսով (Յուրի Բաբախանյան):

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Ցանցային մարկետինգը հարկերից խուսափելու ուղիղ ճանապարհ

Մինչդեռ պետեկամուտների նախարարն անտեղյակ է

երբ ՀՀ պետեկամուտների նախարար Գագիկ Պողոսյանի մամուլի ասուլիսից հետո հարց ուղղեցինք, թե ի՞նչ քայլեր են ձեռնարկվում ցանցային մարկետինգով զբաղվող ընկերություններին հարկային դաշտ բերելու, իր հավաստմամբ սվերային տնտեսության դեմ պայքարող նախարարն անկեղծորեն անտեղյակություն հայտնեց այդ ընկերությունների վերաբերյալ: Սակայն առաջարկեց ասելի մանրամասն ներկայացնել հարցը եւ խոստացավ, որ կքննարկվի եւ կկարգավորվի: Թեեւ դժվար է հավատալ նախարարի անտեղյակությանը, - առավել եւս, որ վերջերս մամլային մարմիններն առգրավել են նշված ընկերություններից մեկի՝ Vip Vision-ի ներկրած մամուլենգ արդյունքը, այնուամենայնիվ սույն հրապարակմամբ կփորձենք իրազեկել նրան այն, ինչ պարտավոր էր իմանալ ի պաշտոնե:

«Հերբալայֆ», «Վիտամաքս», Vip Vision եւ մի շարք այլ ընկերությունների ներկայացուցիչներին շաբաթ հանդիպել ենք փողոցներում, իսկ նրանց հայտարարություններին՝ մամուլում, եւ կարելի է ասել՝ ամենուր: Դրանց իմաստը նույնն է. «Հրավիրում ենք աշխատանքի բարձր եկամտաբերությամբ»: Այնուհետեւ նշվում են հայտարարության հեղինակի հեռախոսահամարը եւ անունը: Սա գործունեության նախնական եւ միայն մեկ հատվածն է: Հայտարարության խայծը կուլ տվողին նախ ներկայացվում է, թե ինչ գործունեություն է ծավալում տվյալ ընկերությունը եւ ինչպես: Եթե պարզ ասենք՝ սննդային հավելումներ ներկրելով եւ վաճառելով: Այդ հավելումներն իբր թե բուժիչ նշանակություն են ունենում բազմաթիվ հիվանդությունների բուժման եւ ավելորդ քաշից ազատվելու համար: Արդա աշխատանքի ընդունվել ցանկացողին երկարաբառակ գովերգում են ընկերության արտադրանքը, իսկ երբ վերջինս հարցնում է, թե ինչո՞ւ չի վաճառվում դեղատներում կամ խանութներում, կամ արդյոք առողջապահության նախարարության արտոնագիր ունի՞, ամեն ինչ փոխվում է: Բերվում է ամեն մի արդարացում, բայց որեւէ պատասխան չի տրվում: Անպատասխան են մնում նաեւ մի շարք այլ եւ մասնավորապես՝ «Ինչպե՞ս են խուսափում ցանցային մարկետինգով զբաղվող ընկերությունները հարկային պարտավորություններից» հարցը: Դրա համար պետք է իմանալ նրանց կառուցվածքը: Այն նման է բուրգի, որի գլխին գտնվում է կամ գտնվում են ընկերությունների ներկայացուցիչները Հայաստանում: Նրանք ստանում են արտադրանքն արտերկրից եւ հայտարարում աշխատանքի ընդունման հայտարարությունը: Նոր աշխատակիցները, ովքեր ընդունում են հրավերը, պարտավորվում են վաճառել այդ արտադրանքը ուղղակի սպառողին կամ գտնել նոր վաճառողների: Վերջինի դեպքում հայտարարության հեղինակին տրվում են լրացուցիչ միավորներ, որը նշանակում է, որ բացի վաճառքից ստացվող շահույթի մասնաբաժնից, նա ստանում է լրացուցիչ վարձատրություն: Այսինքն՝ շահագրգռություն է առաջանում, որպեսզի արտադրանքը սպառողները հետագայում դառնան նաեւ վաճառողներ: Այդ երեւույթը շղթայաձեւ տարածվում է մյուս վաճառողների վրա: Հյուսվում է բրգաձեւ ցանց՝ վերեւից ներքեւ անընդհատ աճման միտում ունեցող: Այդ բուրգի վերեւում գտնվողներն ունենում են ամենաշատ միավորներ, հետեւաբար՝ վարձատրվում ամենաբարձր: Հասկանալի է, որ այդ վարձավճարներից որեւէ մեկը եկամտահարկ չի վճարում: Ընկերության արտադրանքը վաճառողները որպես աշխատակիցներ նշված չեն եւ նրանց ստացած գումարները ոչ մի տեղ չեն արձանագրվում: Սակայն դա միակ չվճարվող հարկը չէ: Արտադրանքը վաճառվում է գործնականում առանց որեւէ հարկման: Վաճառվում է ուղղակի սպառողին եւ, ի տարբերություն առեւտրի կետերի, որոնք պարտավոր են վճարել ավելացված արժեքի հարկ, շահութահարկ, հաստատագրված վճարներ եւ այլ հարկեր, այս ամենը ցանցային մարկետինգը շրջանցում է: Եթե նկատի ունենանք, որ 1 տուփ սննդային հավելման նվազագույն արժեքը կազմում է 10-15 դոլար, իսկ որեւէ հիվանդության բուժման համար նշանակվող տուփերի թիվն առնվազն 7-10 է լինում, ապա կարելի է պատկերացնել, թե ինչպիսի գումարներ են պտտվում հարկային դաշտից դուրս: Եվ դա շարունակվում է արդեն 5-6 տարի: Այդ ընթացքում Հայաստանում փոխվել են վարչապետներ, հարկային եւ մաքսային վարչությունների պետեր, հետագայում պետեկամուտների նախարարներ, սակայն ցանցային մարկետինգը շարունակել է փթթել՝ շրջանցելով պետբյուջեն: Վերոնշյալ պատճառները եւս ցույց են տվել, որ «անտեղյակ» են այդ երեւույթից, ինչն ակամա դրդում է «անտեղյակության» արտահայտել այլ տեղ փնտրելու:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՈՒՇԱԳԻՐ

«Հայկական ավիաուղիներում» ո՛չ Արցախի տեղը գիտեն, ո՛չ անվանումը

Որ Արցախը եւս ընդգրկված է Հայաստան այցելող օտարերկրյա զբոսաշրջիկների երթուղիների ցանկում՝ փաստ է: Արդեն կան տուրիստական գործակալություններ, որոնք իրենց գովազդային նյութերում Հայաստանի տեսարժան վայրերի թվում նշում են նաեւ Արցախի պատմաճարտարապետական հուշարձանները: Սակայն այս մասին կարծես թե տեղյակ չեն «Հայկական ավիաուղիներ» (ՀԱՈՒ) ՊՓԲ ընկերությունում: Ընկերության պատվերով հրատարակվել է Երեւանում զբոսաշրջիկների ուղեկցորդի (գիդի) ուղեցույցն անգլերենով եւ ֆրանսերենով: Գունավոր եւ որակյալ թղթի վրա տպագրված այս ուղեցույցը, թերեւս, առանձնահատուկ ուշադրության արժանի չլիներ, եթե հանվի չառնենք մի կարեւոր հանգամանք: Նրա շապկին պատկերված է Հայաստանի քարտեզը, հարեւան պետությունների՝ մեզ սահմանամերձ հատվածները, Նախիջեւանը, որպես Ադրբեջանի մաս, եւ ընդհանրապես բացակայում է Ղարաբաղը՝ ոչ որպես ԼՂԻՄ, ոչ որպես ԼՂՀ, ոչ որպես պարզապես Լեռնային Ղարաբաղ, չխոսելով արդեն Ադրբեջանից որեւէ գույնով այդ տարածքի տարբերակման մասին:

Հետաքրքիր է, «Հայկական ավիաուղիներում» մտածել են, թե ի՞նչ մտքեր կայցելեն օտարերկրացի զբոսաշրջիկին, եթե նա տեսնի այս ուղեցույցը եւ այցելի Արցախ: Պարզապես այն, ինչ, հսկայական միջոցներ ծախսելով, փորձում է նրան համոզել ադրբեջանական քարոզչական մեքենան. իբր Արցախն ադրբեջանական տարածք է, հայերը գրավել են եւ ընդունում են, որ իրենցը չէ: Հասկանալի է, որ այս դեպքում արդեն անիմաստ է նրան պատմել արցախցիների ինքնորոշման իրավունքի, մղած պայքարի եւ նման բաների մասին:



Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Եվրոպական դատարանը հասու կլինի միայն սահմանադրական բարեփոխումներից հետո

Եվրախորհրդին անդամակցելը, ի թիվս մի շարք արտոնությունների, Հայաստանի քաղաքացիներին հնարավորություն կտա դիմելու մարդու իրավունքների եվրոպական դատարանին (ՄԻԵԴ): Մեր քաղաքացիներից շատերն են երազում այդ օրը՝ պատկերացում իսկ չունենալով դիմելու տեխնիկական կողմի մասին: Եվ ոչ միայն քաղաքացիները, նաեւ իրավաբանները, որոնց ծանոթացնելու նպատակով վերջին շրջանում պարբերաբար միջոցառումներ են կազմակերպվում: ՀՀ Սահմանադրական դատարանը Եվրախորհրդի մարդու իրավունքների գլխավոր տնօրինության աջակցությամբ սեպտեմբերի 8-ին եւ 9-ին հրավիրել էր միջազգային սեմինար «Համընդհանուր եւ ազգային արժեքները մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում» թեմայով: Սեմինարի աշխատանքներին մասնակցում էին ՌԴ-ի, Ադրբեջանի, Վրաստանի, Ուկրաինայի եւ նախկին խորհրդային մի շարք հանրապետությունների ՍԴ անդամներ, նախագահներ: Զեկուցումով հանդես եկան Եվրախորհրդի մարդու իրավունքների գլխավոր տնօրինության ծրագրերի խորհրդական, դոկտոր Ինեսա Զիեմելեն, ՄԻԵԴ նախկին դատավոր Իգի Ֆոյգելը, ՄԻԵԴ դատավոր Էգիլս Լեւիսը եւ այլք:

ՀՀ ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյանը նիստերից մեկի ավարտին լրագրողների հետ ունեցած ճեղագրույցում կարեւորելով սեմինարի թեմայի ընտրությունը, հայտնեց, որ ազգային առանձնահատկությունը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում միջազգային առումով այսօր լուրջ քննարկումների թեմա է, որովհետեւ հաճախ միջազգային կազմակերպությունների, մարդու իրավունքների միջազգային դատարանների որոշումների եւ ազգային օրենսդրության լուծումների միջեւ որոշակի հակասություններ են առաջանում: Խնդիրն այն է, թե ինչպիսի՞ լուծում գտնել դրան ինչպես եւ ներդաշնակել համընդհանուր ու ազգային առանձնահատկությունը: «Սեմինարը հնարավորություն է տալիս ոչ միայն տեսական ու գործնական հարթության վրա պատկերացում կազմել արժեքների այդ համակարգերի մասն, այլ գործնականում մեր համարակությանը տեղեկացնել, թե ի՞նչ չափանիշներով, ի՞նչ սկզբունքներով է Եվրոպան այսօր մոտենում մարդու իրավունքների հիմնահարցին եւ մարդու իրավունքների եվրոպական դատարանում իրենց գործերն ինչպե՞ս կարող են քննության առարկա դառնալ», նշեց Հայաստանի ՍԴ նախագահը:

Ծանուցելով մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու մեխանիզմին, որն Հարությունյանը շեշտեց, որ ՄԻԵԴ-ն ունի դատավարության իր որոշակի կարգն ու սկզբունքները: Նախ՝ քննվում է ոչ թե այս կամ այն անհատի գործը, այլ անհատն ընդդեմ իր պետության, երկրի այն քաղաքների, որոնք իր իրավունքները լիարժեք չեն պաշտպանում: Քաղաքացին կարող է դիմել միայն ներքին բոլոր ընթացակարգերն անցնելուց հետո եւ միայն այն իրավախախտումներով, որոնք ծագել են Եվրախորհրդին անդամակցելուց հետո: ՍԴ նախագահն ավելացրեց նաեւ, որ հայաստանցիներս մինչեւ ՄԻԵԴ հասնելը նախադատական մեծ աշխատանք ունենք կատարելու, բացի այն, որ փաստաբաններին ու դատավորներին ծանուցում են դիմելու մեխանիզմին եւ սպասվելիք արդյունքներին: Եվրախորհրդի Հայաստանին ներկայացվող պահանջներից մեկն էլ հիմնական եւ սոցիալ-տնտեսական իրավունքները իրականացնելն է: Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելը եւ օրենքները մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի չափանիշներին համապատասխանեցնելը: «Այսօր մենք մարդու իրավունքները որպես բարձրագույն արժեք, նույնիսկ մեր սահմանադրությամբ չենք ամրագրել, մարդու արժանապատվության անձեռնմխելիությունը չենք ամրագրել, քաղաքացին ՍԴ-ին դիմելու հնարավորություն չունի, ինչպե՞ս պետք է գնանք եվրոպական դատարան եւ փորձենք պաշտպանվել»:

Գագիկ Հարությունյանը տեղեկացրեց, որ եվրոպական դատարանում 12 հազար գործ է կուտակվել եւ պետությունները սպիտված կլինեն մարդու իրավունքների պաշտպանության ներքին արդարադատության արդյունքներ ստեղծել: Մտածում են նաեւ առանձին դատարան ստեղծել, որը կհետեւի համաձայն ստորագրած միջազգային փաստաթղթերի կատարմանը:

Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

Մի պատկեր մեր առօրյա կյանքից

Գործազուրկներ, թոշակառուներ, որոնք հավաքվում են Կոմայգում

Օրեր առաջ Երևանյան շոգից տանջահար մարդկանց հասկացողությամբ գայթակղում էին սրճարաններն ու այգիների սվերաբաս մասերը: Պարապությունից այգիներում խմբված մարդկանց խոսքն ու զրույցը խաղաղով ոստվող հին ու նոր լուրերից ու կյանքի դժգոհությունից այն կողմ չէր անցնում: Անգլիական այգին (նախկին Կոմայգին) ոչնչով չէր տարբերվում մյուսներից: Այս ու այնտեղ ծառերի տակ, շոգից ու օդուշերից «թմրած», կյանքից մաշված տղամարդիկ, կանայք եւ սովորական դարձած, ինչպես փողոցներում, գեսնուղիներում, այնպես էլ այստեղ իրենց օրերը մուրացող ծերունիներ, երեխաներ: Կոմայգու Գ. Սունդուկյանի անվան թատրոնի մերձակա տարածքը, որտեղ մի ժամանակ ֆուտբոլասերների սվվար բազմություն էր հավաքվում եւ ֆուտբոլային հերթական խաղից հետո թեժ խոսակցություն ծավալում, վերջին տարիներին փոխել էր իր բնույթը: Հին նախասիրություններին փոխարինել էին նոր թեմաներ դարաբաղյան շարժումը, պատերազմը եւ նրան հաջորդած հայաստանյան քաղաքական կնճռոտ հարցերի «ընարկում-վերլուծությունները»: Հոգանցիկ մի հայացք եւ խոսակցությունների մեկ-երկու պատառիկ լսելը բավական էր ամբողջացնելու սոցիալական այս խավի ծայրահեղ թշվառության տխուր պատկերը: Անհնար էր, որ աչագորեն չխամրեր հիշ առաջվա հեստարհիր ու ինքնահիշ սրճարանի, անգլիական կանաչաղաս ռեստորանի հաճելիորեն զարմացնող տրավորությունը: Կյանք-պատկեր-ամբողջացումի այս ծայրահեղ հակասությունների միջեւ Սունդուկյանի քարեղենացած Պեղոն խորհրդանշական մի բան է թերեւս, աշխարհի հակասության-անարդարության հավերժական պտույտում: Կանգնում ես լսելու նրանց, զգում ես, որ նրանք կարիք ունեն որեւէ մեկին պատմելու իրենց ցավի մասին:

Գիտես, որ ոչնչով օգնել չես կարող, կարող ես միայն լսել: Ընդամենը լսելով: «Վերեւներում մեզ լսողն ո՞վ է: Շենգավիթի 1-ին եւ 2-րդ հանրակացարանների պայմաններն անտանելի են: Անձրեւներից տանիքը վաղուց քայքայվել է, փտել: Ջուրը լցվում է բոլոր բնակարանները: Անձրեւաջրերի մեջ ենք քնում: Դիմել ենք կառավարություն: Եկել, տեսել են, ասում են 2 մլն դրամ է պետք վերանորոգման համար, այդ փողով նոր շենք կկառուցենք: Ամեն օր խնդրում ենք Աստծուն, որ անձրեւ չգա: Լավ է, որ չի գալիս»: «Երաշտ է, ուրախանում ես, այ մարդ», ընդհատում է կողքինը: «Աբովյանում եմ աղրում, ուզում եք, եկեք ձեր աչքով տեսեք, առավոտ ժամը 5-6-ին, մութուլուսին, 10-12 երեխա մեր շենքի կողքի աղբակույտերն է քրքրում, շներն էլ կողքերը լիքը»:

Չաքխաստող մարդիկ են բոլորը, հնամաշ հագուստներով, հոգնած դեմքերով, խամրած այտերով: «Առավոտից մի կտոր չոր հաց ենք ուտում, դուրս գալիս, ամբողջ օրն էստեղ անց ենք կացնում»: «Բա ո՞նց եք ապրում»: «Շունը ոնց է փողոցում ապրում, էդպես էլ մենք»: Սկսվում է խոսքի իրարանցում, եւ մեկը մյուսին հերթ չի տալիս: Ամեն մեկի կյանքը մի տխուր պատմություն է հոգս ու ցավով լի: «Յոթ հոգի ենք, ոչ մեկս չի աշխատում: Կինս ինֆարկտ է տարել, ծանր վիճակում է: Ինձ աշխատանքից ազատել են միայն նրա համար, որ 6-7 ամսվա չվճարված աշխատավարձս էի ուզում: Մասնավոր հիմնարկ է, ոչ օրենք կա, ոչ աշխատողի իրավունքը պաշտպանող: Ծոցում հանես՝ գործից կազատեն: Էներգիայի պարտքս 70.000 դրամ է: Եկան լույսը կտրեցին, գնացի, խնդրի վրա, ախորված եմ ինձ զգում: Փոսի մեջ ենք, ձեռ մեկնող չկա: Թող հիմա էլ ախորեն, ավելի լավ չէ՞»: «Բոլորը փախչում են այստեղից, ով ճար ունի գնում է, ես էլ տղա ունեմ, երկու տարի հետո բանակի տարիքի կհասնի: Փախցնելու եմ այստեղից, որ չծառայի»: «Ո՞նց թե չծառայի, բղավեց մեկն այն կողմից: Բա որ բոլորս մեր տղերքին պահենք, ո՞վ ծառայի հայրենիքին»: «Ի՞նչ հայրենիք, սոված ի՞նչ հայրենիք»: «Բա էդ վերեւներում չե՞ն ասում, գնացողները ջահելներ են, վաղվա բանակում զինվոր չի լինելու: Ազգը կոտորվելու է, մի քանի տարում դատարկվեց էս երկիրը: Քանի տարի պետականություն չենք ունեցել: Հարեւաններն են մեզ ճնշել, կոտորել: Հիմա պետական մակարդակով են բնաջնջում, սիստեմատիկ գենոցիդ է Հայաստանում: Թուրքերի ուզածն էս չէ՞»: «Ամենքն էլ ուզում են ապրել, ոչ ոք չի ուզում մեռնել, դրա համար ով ոնց կարողանում է, փախչում է: Ո՞ւմ է մնալու էս երկիրը, ու՞մ են կառավարելու: Ժողովուրդը ի՞նչ ունի, որ մեկը մյուսից գողանա: Ինչ ունեինք, ծախեցինք, էլ հարեւանից չենք կարող պարտք անել: Նա էլ չունի: Սեփականաշիրջ խանութին, սրճարանին ո՞ր մեկը ոիսկ կանի մոտենա: Էն ամենափոքր տեղի խեղճ պահակը վախից այլը մի բոթ չի կոցնում: Որ մի ծեղ կորավ, առավոտը աշխատանքից կազատվի: Հիմա ժողովրդին թալանելու բան չի մնացել, արդեն իրենք իրար կուտեն»:

Գնալով խտացող աղմուկի մեջ բառերը խեղդվում էին, ոչինչ չէր լսվում: «Լավ, ելքը ո՞րն է, այսպես ինչքան պիտի ապրենք»: «Մինչեւ մեռնենք», արձագանքեց դողդոջուն մի ձայն: «Էս ժողովրդին թող աշխատանք տան, քիչ ուտեն, մի քիչ մեր մասին մտածեն»: «Ժողովրդի մասին մտածող ղեկավար է պետք, բայց ո՞վ է հավատում նրանց, կա՞ էդպիսի մարդ»: Կարծիքները հասնում էին վտանգավոր ծայրահեղության: Այսպես ամեն օր: Եռդարձին հիշեցի Կոմայգու կյանքից հալածված, արհամարհված ու անվերջ բողոքող մարդկանցից մեկի ասածը. «Թուրքը իգո՞ւր է ասել՝ հայերին մի խանգարեք, հանգիստ թողեք, իրենք իրենց կուտեն, կվերջանան»:

ՄԵԼՈՒՀԱ ԲԱԴԱԼՅԱՆ



Քաղաքացիական օրենսգրքի նոր փոփոխություններն այլ գնահատմամբ

Քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված նոր փոփոխություններին «Ազգ» անդրադարձել է օգոստոսի 25-ի համարում տպագրելով վճռաբեկ դատարանի նախագահ Հենրիկ Դանիելյանի մեկնաբանությունները: Հիշեցնենք, որ նոր փոփոխություններով քաղաքացիները 15-օրյա ժամկետում, առանց արտոնագրված փաստաբանի միջնորդության, կարող են դիմել վճռաբեկ դատարան, դատավորներից ոմանց գնահատմամբ կատարված փոփոխությունները կօգնեն կանխելու դատական շրջադարձը, քանի որ բեկանվելուց հետո վճռաբեկ դատարանը գործն ուղարկում է ոչ թե առաջին ատյանի դատարան, ինչպես նախկինում էր, այլ վերաքննիչ դատարան: Ստորեւ իրավաբանների մի այլ խումբ իր տեսակետն է արտահայտում օրենսդրական փոփոխությունների այս կամ այն կետի վերաբերյալ:

Բորիս Ավագյան (ՀՀ արդարադատության խորհրդի անդամ)-Կարծում եմ, քաղաքացիներին վճռաբեկ դատարան դիմելու իրավասություն տալը ճիշտ է, այսպես ավելի արդյունավետ կլինի նրա աշխատանքը: Վճռաբեկը դառնալով սովորական դատարան ավելի է կաղվում դատական մյուս օղակների հետ: Առաջ կար Գերագույն դատարան, պալատներ, ԳԴ-ի նախագահություն եւ, փաստորեն, այստեղ այդ գործերն ավելի էին եփվում տարբեր ատյաններում: Վերջնական արդյունքն ավելի արդար էր լինում, քան անգլիական թագուհու պես նստես եւ սպասես, թե բողոքը երբ կգա, որ քո ասելիքն ասես:

Մասիս Ղազանչյան (փաստաբան)-Քաղաքացիական դատավարության մեջ կատարված վերջին փոփոխությունները թելադրված են ոչ օրենքը բարելավելու մտահոգությունից: Դատավարության օրենսգիրքը մինչեւ նշված փոփոխություններն իր մեջ մի շարք հակասություններ էր պարունակում: Այսպես եթե առաջին ատյանի դատարանը երրորդ անձին (ինքնուրույն պահանջներ ներկայացնող կամ չներկայացնող) մասնակից չէր դարձնում դատաքննությանը, ապա վերաքննիչ բողոքի դեպքում վերաքննիչ դատարանը նույն երրորդ անձին մասնակից դարձնելու իրավունք չունենալու պատճառով (քաղ. դատ. օր.-ի 215 հոդված) սխալված կայացնում է վճիռ, որը դատապարտված էր բեկանման բողոք բերելու դեպքում (քաղ. դատ. օր.-ի 227 հոդված 1-ին կետ, 2-րդ, 3-րդ ենթակետ):

ՀՀ օրենքը դատավարությունում փոփոխություններ կատարելու մասին այս պրոբլեմն ավելի է սրում, որն ուղղակի տանելու է դատարանների կողմից ուղղակի կամ անուղղակի դատավարական նորմերի խախտմանը: Նույն պատճառաբանությամբ, ինչ-որ այսօր, բերում է վճռաբեկ դատարանի պալատի նախագահը օրենքի խախտմամբ բողոքը գրությամբ հետ վերադարձնելով: Սույն փոփոխությունների համաձայն, ՀՀ վճռաբեկ դատարանը, բեկանելով գործը ուղարկում է նոր քննության վերաքննիչ դատարան:

Առաջին ատյանի դատարանը երրորդ անձին պատասխանողին, կամ պատասխանողներից մեկին մասնակից չի դարձրել դատաքննությանը: Վճռաբեկ դատարանը 227 հոդվածի հիմքերով նշված անձանց բողոքների հիման վրա բեկանել է գործը եւ ուղարկել վերաքննիչ դատարան: Երրորդ անձի պարագայում վերաքննիչ դատարանը նորից չի կարող նրան մասնակից դարձնել դատաքննությանը: Պատասխանողին կամ պատասխանողներից մեկի պարագայում նրանք զրկվում են հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքից (նորից տես քաղ. դատ. օր.-ի 215 հոդված):

Ով կարող է սրանից լավ անեկդոտ պատմել, թող պատմի: Այս փոփոխություններով առաջարկվում է, որ երրորդ անձը, որի բողոքով բեկանվել է տվյալ գործը, դիմի վերաքննիչ դատարան գործի քննությունը կասեցնելու խնդրանքով, ապա իր պահանջը որպես ինքնուրույն հայց ներկայացնի առաջին ատյանի դատարան (ըստ երեւույթին խնդրի, որ իր հայցը մերժեն), որպեսզի բողոք բերի վերաքննիչ դատարան երկու գործերը միացնելու խնդրանքով:

Նույնը վերաբերում է պատասխանողներին: Փաստորեն երրորդ անձին դնում են այնպիսի իրավիճակում, որ ավելի շուտ նա կհրաժարվի դատական պաշտպանությունից, քան նման ճանապարհով կփորձի պաշտպանել իր իրավունքները:

ԱՆԱՀ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

Սոչի ժամանակներում Թուրքիայի կառավարությունը պետք է վերջնականապես որոշի վերջերս ավարտված գործարքի հաղթողին: Անկարան ձեռք է բերելու 145 ռազմական ուղղաթիռներ 4 մլրդ ամերիկյան դոլար ընդհանուր արժողությամբ: Մրցույթում առաջին տեղը գրավել է ամերիկյան «Բել Թեքսթրոն» ընկերության AH-1Z տիպի ուղղաթիռը, որն անվանվում է նաեւ «Քինգ կոբրա» (թարգմանաբար՝ Կոբրա արքա), երկրորդ տեղը՝ ռուս-իսրայելական համատեղ «Կամով-IAI» արտադրության Ka-50-2 ուղղաթիռը:

Թուրքական մամուլը, վկայակոչելով կառավարական աղբյուրները, գրում է, թե հենց վարչապետ Էջեւիթի կարգադրությամբ է հրապարակվել միանգամից երկու հնարավոր հաղթող ընկերությունների անուններ: Դիտորդների կարծիքով Էջեւիթը մրցույթում հաղթող ընկերության անունը թողել է առկախ հետաքրքրելով առնվազն երկու նպատակ: Առաջին. Թուրքիայի վարչապետը ռուս-իսրայելական առաջարկը թողնելով ամերիկյան առաջարկի հետեւում, սողոքել է ռուս զինվորականության նյարդերը, հարվածել նրանց ինքնասիրությանը, ինչը խոչընդոտում է Անկարայի եւ Մոսկվայի միջեւ ռազմական ոլորտում հնարավոր համագործակցությունը: Երկրորդ. Էջեւիթը վստահ է, որ ստեղծված իրավիճակում թուրքական կառավարությունը հնարավորություններ ունի ամերիկացիների հետ առեւտրում սակարկությունների դիմել:

Վերլուծաբանների կարծիքով, եթե նույնիսկ թուրքական կառավարությունը ֆինանսական հարցերում կարողանա համաձայնության գալ ամերիկացիների հետ, միեւնույն է, առաջ են գալու զուտ քաղաքական դժվարություններ: ԱՄՆ Կոնգրեսը հնարավորություն ունի ինքնաթիռների գործարքի վրա արգելք դնելու: Իրադարձությունների նման զարգացման դեպքում Անկարայի համար ամեն ինչ կորած չի լինի, եւ Էջեւիթի կառավարությունը գործարքն իրականություն կդարձնի ռուս-իսրայելական ընկերություններից գնելով ուղղաթիռներ:

ԱՄՆ Կոնգրեսում Թուրքիային «Քինգ կոբրա» ուղղաթիռներ վաճառելու դեմ բավականին ակտիվ լոբբիինգ են ծավալել հայկական եւ հունական շրջանակները, որոնք ուղղաթիռների վաճառքի խնդիրը ուղղակիորեն կապում են Թուրքիայում մարդու իրավունքների ոտնահարումների հարցի հետ: Կոնգրեսականներ Ֆրենկ Փալոնը (դեմոկրատ), Ջորջ Ռադանովիչը եւ Մայքլ Բիլիրաքիսը (հանրապետականներ) կտրականապես դեմ են ուղղաթիռների վաճառքին: Միեւնույն ժամանակ նախագահ Բիլ Քլինթոնը Ֆրենկ Փալոնին հղած նամակում գրում է, թե Թուրքիայում մարդու իրավունքները հարգելու առաջընթաց է նկատվում, իսկ տարածաշրջանում ԱՄՆ-ը Թուրքիայի հետ ունի համընդհանուր շահեր: Ահա թե ինչու Քլինթոնը կոնգրեսականներին կոչ է արել աջակցել Թուրքիային ամերիկյան ուղղաթիռներ վաճառելու խնդրում:

ԱՄՆ-ում հայկական լոբբիի ներկայացուցիչների կարծիքով Քլինթոնի վերոնշյալ նամակը վկայում է, թե ամերիկյան վարչակազմը շեղվում է այսպես կոչված «ութ պայմանների սկզբունքից»: Դեռ 1997 թ. դեկտեմբերին ԱՄՆ կառավարությունը Թուրքիայի այն ժամանակների վարչապետ Մեսութ Յըլմազին զգուշացրել էր, որ Վաշինգտոնը Անկարային կմատակարարի արդիական զենք եւ ռազմական տեխնիկա, եթե վերջինս չհեղվի «ութ պայմանների սկզբունքից», մասնավորապես թուրքական բանտերից ազատ արձակի քաղբանտարկյալներին, դադարեցնի քաղաքական ճնշում գործադրել իրավապաշտպան կազմակերպությունների վրա, քաղաքական կուսակցություններին ազատ գործունեության հնարավորություններ տա, ամերիկյան զենքը եւ տեխնիկան չօգտագործի խաղաղ բնակչության դեմ:

Թե ինչ վախճան կունենա ամերիկյան ուղղաթիռները Թուրքիային վաճառելու հարցը, վերջնականապես պարզ կլինի միայն ԱՄՆ նախագահական նոյեմբերյան ընտրություններից հետո: Դեմոկրատ թեկնածու Ալբերտ Գորի հաղթանակ դեպքում, ինչպես կարծում են Անկարայում, թուրք-ամերիկյան ռազմական հարաբերությունները առավել կխորանան, իսկ 4 միլիարդ դոլար արժողությամբ ռազմական գործարքի համար կանաչ ճանապարհ կբացվի: Իսկ եթե ընտրություններում հաղթի հանրապետական թեկնածու Ջորջ Բուշ կրտսերը, ապա ԱՄՆ նոր կառավարությունը կարծր դիրքորոշում կորդեգրի Թուրքիայի նկատմամբ, իսկ ուղղաթիռների 4 մլրդ դոլար արժողությամբ գործարքը դժվար թե իրականացվի:

Ըստ ռուսական մամուլի՝ Ռ. Ղ.

Գորի հաղթանակի դեպքում թուրք-ամերիկյան ռազմական կապերն առավել կխորանան

Իսկ 4 միլիարդ դոլար արժողությամբ ռազմական գործարքին կանաչ ճանապարհ կբացվի

Գերմանացի նեոնացիստները վերաբխուժացել են

Գերմանիայում ծայրահեղ աջերի դեմ պայքարելն անչափ դժվար է: Իշխանությունները մի կողմից մտածում են պատժիչ միջոցների մասին, իսկ մյուս կողմից փորձում են կանխել ռասիստական տրամադրությունների հետագա ծավալումը: Ներկայումս փորձագետների եւ պետության ներկայացուցիչների հատուկ հանձնաժողովն ուսումնասիրում է օտարայաց NPD կուսակցության արգելման հնարավորությունը: Ներքին գործերի նախարարը որոշել է երկրամասերին տրամադրել սահմանային ոստիկանության ուժեր: Բրանդենբուրգի երկրամասում հատուկ ոստիկաններ կտեղադրվեն նեոնացիստների խմբային գործողությունների վերահսկման նպատակով: Իսկ Սաքսոնիայի երկրամասում բացատրական աշխատանք է սկսվել դպրոցներում, խոշոր ՁԼՄ-ները ինտերնետային հատուկ էջ են բացել ծայրահեղ աջերի վտանգավորությունը լուսաբանելու համար:

Գերմանական մամուլն ամեն օր նյութեր է հրապարակում ռասիզմի վտանգների վերաբերյալ: Ի դեպ, ծայրահեղ աջերն առավել ակտիվ են նախկին ԳԴՀ-ի տարածքում, որտեղ ապրում է Գերմանիայի բնակչության ընդամենը 20 տոկոսը:

Նեոնացիզմի դեմ պայքարի միասնական ռազմավարություն առայժմ չկա: Շատերի կարծիքով NPD կուսակցության արգելումն արդյունք չի տա եւ լոկ կապակենտրոնացնի նեոնացիստներին ու կդարձնի անվերահսկելի: Նացիստամետ երիտասարդների այսպես կոչված «սափրված գլուխների» վերադաստիարակման փորձերը նույնպես անհիմաստ են: «Էքսպրես» հանդեսը բերում է Բալթիկ ծովի ափին գտնվող ավաններից մեկի օրինակը, որտեղ «վերադաստիարակված» եւ համակենտրոնացման ճամբար այցելած երեք «սափրած գլուխներ» հուլիսի 23-ին ծեծելով սպանեցին մի աֆրիկեան ներգաղթյալի:



Ծայրահեղ աջերի դեմ դժվար է պայքարել նաեւ այն պատճառով, որ նեոնացիստական NPD-ի ակտիվ մարտիկների շուրջը համախմբված են մոտ 10 հազար «սափրած գլուխներ»՝ սոցիալական ռասայի գերազանցության եւ հակահրեականության ջատագովներ, որոնց կազմած օժանդակ խմբակցությունները փաստորեն անվերահսկելի են:

Խնդիրն այն է, որ «սափրած գլուխ» լինելը ներկայումս գնահատելի է համարվում գերմանացի երիտասարդության միջավայրում, մանավանդ՝ արեւելյան երկրամասում: Լրագրող, գերմանացի ծայրահեղ աջերին նվիրված գրքերի հեղինակ Բուրխարդ Շրյոդերը նույնիսկ պնդում է, թե «նացիստները ժողովրդականություն են վայելում»: 13-14 տարեկան դեռահասները որոշակի հպարտությամբ ցուցադրում են իրենց սափրած գլուխները, բաճկոնները, կարդում նացիստական գրքույկներ, ներկա գտնվում կիսաընդհատակյա համերգների, առանց երկար-բարակ մտածելու ընդունում բռնության եւ այլատյացության այդ «մշակույթը»:

Ծայրահեղ աջ կուսակցությունները դեռահասների տրամադրությունները ճարպկորեն օգտագործում են իրենց ազդեցությունը տարածելու, նոր անդամներ հավաքագրելու, ծայնատուներ ու հանդերձանք վաճառելու, ինտերնետում էջեր բացելու նպատակով: Մինչդեռ գերմանացիների մեծ մասն առայժմ լռում է: Դյուսելդորֆում եւ Մյունխենում վերջերս կազմակերպված հակառասիստական ցույցերին մասնակցում էին համապատասխանաբար 2000 եւ 3000 մարդ:

Պ. Բ.

ՆՅՈՒ ՅՈՐՔ

2001 թ. ազատ առեւտրի գոտի ՎՈՒՈՒԱՄ-ի երկրների տարածքում

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: Նյու Յորքի ՄԱԿ-ի կենտրոնակայանում տեղի է ունեցել ՎՈՒՈՒԱՄ տարածաշրջանային միավորման անդամ պետությունների՝ Վրաստանի, Ուկրաինայի, Ուզբեկստանի, Ադրբեջանի եւ Մոլդովայի ղեկավարների հանդիպում: Դրա մասնակիցները մոտ ապագայի հիմնական խնդիրներն են համարել բարենպաստ պայմանների ստեղծումը տնտեսական աճի փոխադարձ խթանման համար, Եվրոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային հաղորդակցության միջանցքի անվտանգության եւ արդյունավետության ամրապնդումը, ինչպես նաեւ ՎՈՒՈՒԱՄ-ի շրջանակներում փոխշահավետ առեւտրային հարաբերությունների խորացումը: Վրաստանի, Ուկրաինայի, Ուզբեկստանի, Ադրբեջանի եւ Մոլդովայի նախագահները Նյու Յորքում կայացած հանդիպման ընթացքում պայմանավորվել են 2001 թվականին ՎՈՒՈՒԱՄ-ի տարածքում ազատ առեւտրի գոտու ստեղծման շուրջ եւ ստորագրել են համատեղ հուշագիր կազմակերպության շրջանակներում համակողմանի համագործակցության աշխուժացման մասին: Ինչպես հաղորդում է «BS Press»-ը, հանդիպման ավարտից հետո կայացած մամլո ասուլիսի ժամանակ Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն ընդգծել է, որ «ՎՈՒՈՒԱՄ-ի երկրների որոշումը հատկապես ուշագրավ է ԱՊՀ տարածքում առանց վիզաների տեղաշարժի շուրջ համաձայնագրից Ռուսաստանի դուրս գալու վերաբերյալ հայտարարության ֆոնի վրա»:

Ֆիդել Կաստրոն Ալեքսանդր Լուկաշենկոյին պարգեւատրեց Խոսե Մարտիի անվան պարգեւով

Բելառուսի նախագահ Լուկաշենկոյի համար նախագահական մակարդակով յուրաքանչյուր հանդիպում յուրօրինակ հաջողություն է: Ի հեծուկս ԱՄՆ նախագահ Քլինթոնի, Լուկաշենկոն ողջունում է կԺԴՀ-ի, Կուբայի, Լիբիայի, Իրանի, Իրաքի, Սիրիայի, Հարավսլավիայի քաղաքականությունը, երկրներ, որոնք Վաշինգտոնի կարծիքով դասվում են «միջազգային ահաբեկչությանն աջակցող երկրների շարքում»:

Նյու Յորք ժամանելու ճանապարհին Լուկաշենկոն մեկ օր հանգրվանել է տվել Կուբայի մայրաքաղաք Հավանայում, որտեղ բացվել է Կուբայում Բելառուսի դիվանագիտական ներկայացուցչություն: Ֆիդել Կաստրոն եւ Ալեքսանդր Լուկաշենկոն բանակցություններ են վարել, որի ընթացքում ծեռք է բերվել պայմանավորվածություն՝ զարգացնել Կուբա-Բելառուս հարաբերությունները՝ քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական, գիտա-տեխնիկական, մշակութային, տեղեկատվական, հումանիտար, այլ ոլորտներում:

Հիշեցնենք, որ նախնական պայմանավորվածության համաձայն այս աշնանը սպասվում է Բելառուսի նախագահի այցը Հայաստան: Երեւանը կդառնա այն մի քանի մայրաքաղաքներից մեկը, որտեղ Բելառուսը կունենա դեսպանություն:

Ռ. Հ.

Նյու Յորքի քաղաքապետը չի հարգում ՄԱԿ-ի որոշ հյուրերի

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: Նյու Յորքի քաղաքապետ Ռուդոլֆ Ջուլիանին այսօր հայտարարել է, թե մտադիր չէ մասնակցել ԱՄՆ նախագահի կողմից «Մետրոպոլիտեն» արվեստների թանգարանում անցկացվող ընդունելությանը, որտեղ կհավաքվեն համաշխարհային առաջնորդները: Իր ասելով, քաղաքապետին դուր չի գալիս ընկերախումբը: «Դուք չեք կարող երկակի չափանիշներ կիրառել: Այնտեղ՝ մյուսների կողքին, ներկա կլինեն նաեւ այն պետությունների ղեկավարները, ովքեր մեղավոր են հսկայական թվով մարդկանց մահվան համար», լրագրողներին հայտարարել է Ռուդոլֆ Ջուլիանին:

Անցած շաբաթ Նյու Յորքի քաղաքապետն արդեն մի շարք կտրուկ հայտարարություններ էր արել՝ ուղղված Պաղեստինյան Ինքնավարության առաջնորդ Յասեր Արաֆաթի դեմ, իսկ Ֆիդել Կաստրոյին բնորոշել էր որպես մարդասպանի: Այս անգամ Ջուլիանին չի ծշտել, թե հատկապես ում ներկայի ունի: «Հաշվի առնելով իմ քաղաքական հայացքները ու մնացյալը՝ ես վստահ չեմ, թե դա լավ երեկո կլինի: Անհամեմատ ավելի խելամիտ կլինի այն անցկացնել՝ աշխատելով գագաթաժողովի հյուրերի անվտանգությունն ապահովելու վրա, քան գրանցելով, թե ում հետ ես կցանկանայի զրուցել, եւ ում հետ՝ ոչ», հայտարարել է նա: Ընդունելության փոխարեն Նյու Յորքի քաղաքապետի աշխատանքային գրաֆիկում այդ երեկո նախատեսվում է մասնակցություն ամենօրյա ռադիոտուներից մեկին:

ՀԱՍԱՐՈՍ

Սեմինարներ Երեւանում եւ Բաքվում

ԲԱՔՈՒ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: Այս տարվա հոկտեմբերի 2-ին Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովն այդ կառույցի նախագահի ղեկավարությամբ սեմինարներ կանցկացնի Հայաստանում եւ Ադրբեջանում: Այդ մասին հաղորդել է ԵԽԽՎ-ում Ադրբեջանի Միլի մեջլիսի մշակական պատվիրակության ներկայացուցիչ Շադման Հուսեյնը: Նրա խոսքերով, սկզբում այն կանցկացվի Բաքվում, իսկ այնուհետեւ Երեւանում՝ ադրբեջանական պատվիրակության մասնակցությամբ:

Դատարանը Թուրքիայի նախկին վարչապետ Էրբաքանին հրամայել է հանձնվել իշխանություններին

ՍՆԿԱՐ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: Թուրքական դատարանը երկրի նախկին վարչապետ Նեջմեթդին Էրբաքանին հրամայել է 10 օրվա ընթացքում հանձնվել իշխանություններին եւ կրել դատավճռով սահմանված բանտարկության պատժաչափը: Էրբաքանը 1 տարվա ազատազրկման էր դատապարտվել 1994 թվականի ելույթի համար, որը դատարանը որակել է որպես կրոնական անհանդուրժողականության կոչ: Էրբաքանը երկրի կառավարման գործում իսլամի գործուն դերի կողմնակից է:

Եվրախորհրդարանը պահանջում է արգելել մարդու արհեստական վերարտադրումը

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: 48 ժամ տեւած քննարկումից հետո Եվրախորհրդարանը մերժել է բրիտանական կառավարության խնդանքը՝ թույլ տալ մարդկանց բջիջների արհեստական վերարտադրությունը, եւ դիմելով Եվրոպական երկրներին՝ պահանջել է արգելել այդ գործունեությունը եւ հրեական պատասխանատվության ենթարկել այդ օրենքը խախտողներին: «Կողմ» քվեարկել է 230 մարդ, «դեմ»՝ 237, 43-ը ձեռնպահ են մնացել:

Մշակույթ

«Նվիրվում է մեր փոքր ու տխուր ազգի բոլոր ծաղրածուներին»

Տիգրան Խզմալյանի «Պիերլեկին կամ օդից թեթև» ֆիլմի ներկայացումը

Երեկ կինոյի տանը տեղի ունեցավ Տիգրան Խզմալյանի «Օդից թեթև» («Pierlequin») ֆիլմի ներկայացումը: Ֆիլմը Յալթայի միջազգային փառատոնի ժամանակ արժանացել է երկրորդ մրցանակի, ինչպես հաղորդել էինք նախապես:

Զրուցեցինք ֆիլմի մասնակիցներից եւ հայկական ֆիլմերը Յալթայի փառատոնում ներկայացրած հայ գործիչներից մի քանիսի հետ: Գլխավոր դերակատարներ Վլադիմիր Մսրյանը, Հռչյա Հարությունյանը եւ բեմադրիչ Տիգրան Խզմալյանը չափից ավելի հուզված էին: Եվ դա բնական է:

ՀՐԱՉՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ- Ինձ սկզբնական շրջանում շատ տարօրինակ թվաց, որ Տիգրան Խզմալյանն ինձ հրավիրեց նկարահանվելու այս կինոնկարում, տարօրինակ, որովհետեւ նա հազիվ թե իմանար, որ երիտասարդ տարիներիս եղել եմ կրկեսի արտիստ: Այս կինոնկարում ես հանդես եկա առավելապես որպես կրկեսի, այլ ոչ թե դրամատիկական թատրոնի արտիստ: Ֆիլմը դիտելուց հետո իմ առաջին զգացմունքն այն է, որ այն տարիների իմ ափսոսանքն իզուր չի անցել: Իսկ ինչ վերաբերում է ֆիլմում առած իմ ափսոսանքին, ապա ուրախ եմ, որ մարմնավորել եմ մեր ժամանակների ամենաճանաչված մարդկանցից մեկին՝ Լեոնիդ Ենգիբարյանին: Կա հին եւ նոր Երեւանը եւ, փառք Աստծո, որ այս ծեւով կա...

ՎԼԱԴԻՄԻՐ ՄՍՐՅԱՆ- Այս ֆիլմում նկարահանվելն ինձ համար անչափ կարեւոր էր, կարեւոր էր այն առումով, որ կրկին հիշեցինք իմներս մեզ, կրկին իմներս մեզ տեսանք առանց չարության, թեկուզեւ տխուր, երբեմն խեղճ (սա վերաբերում է այն տեսարաններին, որոնք պատկերում են այսօրվա Երեւանը): Ցերմություն կա ֆիլմում, մի տաք հիշողություն, որ մեզ մարում է առօրյա ամեն ինչից, հոգի պղտորող կեղտ ու փոնանից, մեզ համար հայի, անհարիր ամեն տեսակ հոգեբանական ստրացուցիչ վիճակներից: Մեր ֆիլմում պաթետիկ հերոսներ չկան, անգամ չի ասվում Լեոնիդ Ենգիբարյանի անունը, անձնավորություններ չկան, բայց բոլորս էլ ճանաչում ենք կինոնկարում ստեղծված կերպարներին: Սա մերն է, մեզ հարազատ: Ու պարզապես այն կորցնել պետք չէր: Փառք այս ֆիլմի ստեղծմանը մասնակցած բոլոր մարդկանց, խորին շնորհակալություն Տիգրան Խզմալյանին, որ կարողացավ այսպիսի դժվար պայմաններում ֆիլմ նկարահանել, այն էլ լավ ֆիլմ, որն արժանացավ միջազգային մրցանակի:

ՏԻԳՐԱՆ ԽԶՄԱԼՅԱՆ- Ես ուրախ եմ, որ մեր ափսոսանքն արժանացավ միջազգային կինոփառատոնի մրցանակին: Բայց հիմա ես արդեն մտածում եմ հաջորդ ֆիլմերի մասին: Այլապես մեկ հաջողությամբ սահմանափակվելը արվեստագետի համար վախճան պիտի լիներ: Գիտեմ, դժվար է, գիտեմ, որ միջոցների մեծ սղություն կա: Բայց, միեւնույն է, նոր ֆիլմեր կնկարվեն:

Ֆիլմը (ավելի ճիշտ՝ Հայաստանից ներկայացված մի քանի ֆիլմերը) ներկայացնում էր «Միր» միջպետական ռադիոհեռուստաընկերության Հայաստանի ներկայացուցչության ղեկավար **Կարլ Յալանուզյանը**, որովհետեւ Յալթայի այս փառատոնի կազմակերպիչներից էր միջպետական այս կազմակերպության կենտրոնական խորհուրդը: Պարոն Յալանուզյանն **«Ազգի»** թղթակցին հաղորդեց, որ այս փառատոնի կազմակերպչական ափսոսանքներով զբաղվում էին Յալթայի քաղաքապետարանը, Ղրիմի մարզկոմը, Ուկրաինայի եւ Ռուսաստանի կառավարական կազմակերպությունները, իսկ հովանավորները մի քանի հզոր միավորումներ էին: Փառատոնի ընտրության համար կինոնկարներ էին ուղարկել 30-ից ավելի հեռուստաընկերություններ, որոնցից ընտրվեցին միայն երեքի ներկայացրած ափսոսանքները, այդ թվում նաեւ «Երեւան» ստուդիայի ափսոսանքները: Մեր ներկայացրած երեք կինոնկարներից երկուսը մրցանակներ շահեցին Տիգրան Խզմալյանի «Օդից թեթեւը» եւ «Նողկաք» ստուդիայում նկարահանված Ժիրայր Դաղասյանի կլիպները: Ի դեպ, Ժիրայր Դաղասյանի կլիպները փառատոնի 11 նոմինացիաներից ոչ մեկին չէին համապատասխանում, այդ պատճառով փառատոնի ժյուրին հենց ընթացքում նոր նոմինացիա մտցրեց ծրագիր եւ առաջին մրցանակը շնորհվեց Ժիրայր Դաղասյանի ափսոսանքներին): Փառատոնի վեց օրերի ընթացքում ողջ Յալթայի փողոցներում տեղադրված մեծ էկրաններին ցուցադրվում էին բոլոր ֆիլմերը, ինչպես նաեւ փառատոնի ծրագրից դուրս ցուցադրվող, ժյուրիի անդամ Ռուբեն Գեւորգյանցի «Սերգեյ Փարաջանով (Վերջին կոլաժ)» եւ «Կողբ» ստուդիայի ֆիլմերից մեկը: Կարող եմ ասել, որ Յալթան հայերիս համար մեծ հաղթանակ էր:

Փառատոնի ժյուրիի անդամ, կինոռեժիսոր **Ռուբեն Գեւորգյանցը**, չնայած ֆիլմի պրեմիերայի տխնական տրամադրությանը, առավել ճշգրիտ փորձեց ներկայացնել հայկական կինոյի վիճակը: Փառատոնին ներկայացված է եղել 200 ֆիլմ, որից ընտրվեց 60-ը: Շատ ծոխ փառատոն էր, հոյակապ կազմակերպված, եկել էին 17 երկրների ներկայացուցիչներ: Բոլոր երկրների պատվիրակությունների համար իրենց երկրների իխանությունները, մշակույթի եւ մասնավորապես կինոյի ոլորտի ղեկավարներն ամեն ինչ արել էին իրենց ֆիլմերը բարձր մակարդակով ներկայացնելու համար: «Եվ միայն մենք էինք, որ ներկայանում էինք աղքատ բարեկամի կարգավիճակով: Ու չնայած սրան, մենք երկու մրցանակ շահեցինք:

... Ինչի՞ մասին է «Օդից թեթեւ» («Pierlequin») ֆիլմը: Մեր մասին, մեր քաղաքի, Երեւանի մասին, մեր վերջին 30 տարիների մասին: Թեեւ սցենարի հիմքում եղել են ծաղրածուի (այս դեպքում՝ Լեոնիդ Ենգիբարյանի) կենսագրության որոշ դրվագներ, սակայն ֆիլմում մեզանից ամեն մեկը կտեսնի Երեւանը՝ իր սիրելի Երեւանը: Ամենակարեւոր մի բան. ոչ մեկը եւ ոչինչ ծայրահեղականացված չէ, անգամ մեր այսօրվա թերությունները: Ամեն ինչ չափի մեջ է: Նույնիսկ ծախու կնոջը չես ատում, խղճում ես, ցավում նրա համար: Ֆիլմի դրվագներից մեկում այդ կնոջ սեւամորթ տղան հարցնում է մորը. «Մայրիկ, դու սիրո՞ւմ ես Աստծուն»: «Այո, պատասխանում է մայրը, սիրում եմ, բայց տեր Աստվածն ինձ չի սիրում: Գուցե հետո սիրի, չգիտեմ...»:

Անչափ հետաքրքիր մի ֆիլմ է, հուզիչ, բայց ոչ լալկան: Ճշմարիտ գործ է:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

Երաժշտական Ճապոնիա Հայաստանում

1992 թվականից սկսած «Ափսոսանք եւ մենք» խորագրով երաժշտական փառատոնի շրջանակներում սեպտեմբերի 10–17-ը առաջին անգամ Երեւանում անց է կացվելու Ճապոնիայի երաժշտական մշակույթի փառատոն: Այն անցկացվում է ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության ու Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի նախաձեռնությամբ՝ Ճապոնիայի հիմնադրամի հովանավորմամբ: Համերգները տեղի են ունենալու «Արամ Խաչատրյան» համերգասրահում, կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը եւ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի սրահում: Փառատոնում ընդգրկված են հայ, ճապոնացի կոմպոզիտորների ստեղծագործություններ (Ա. Խաչատրյան, Լ. Ճգնավորյան, Ա. Տակեհակա, Ջ. Գասպարյան, Տ. Տակեմիցու), դիրիժոր՝ Հիսայոշի Ինոյե: Նաեւ կհնչեն Մոցարտ, Գրիգ, Ստրավինսկի, Դեբյուսի, Շուբերտ:

Այս առիթով հրավիրված մամուլի ասուլիսում ՀՖ նվագախմբի գեղարվեստական ղեկավարի պատասխանատու Յուրի Պողոսյանը հիշեցրեց, որ այս տարի Հայաստանի ֆիլհարմոնիկը ճապոնական կառավարության կողմից անհատույց օգնություն է ստացել՝ երաժշտական գործիքներ: Այս փառատոնը ինչ-որ տեղ ՀՖ բարոյական պատասխանն է: Ասուլիսին ներկա ճապոնացի հյուրերը համոզված էին, որ երաժշտությունը կամրապնդի Հայաստանի եւ Ճապոնիայի մշակութային համագործակցությունը: Ի դեպ, մենեջերուհի (մեցցո սոպրանո) Չիեկո Հայաշին, աղջիկը Ֆրանսիայում, արդեն 3 տարի մասնակցում է եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հոգեւոր երաժշտության ժամին:

Առիթը բաց չթողնելով՝ ՀՖ տնօրեն Ռոբերտ Միրզոյանին խնդրեցինք պարզաբանել Լ. Ճգնավորյանի հեռանալու փաստը: Նա ասաց, որ Լ. Ճգնավորյանի հեռանալու հիմնական պատճառը. «... այն է, որ նա իր առաքելությունը կատարված է համարում, բարձր որակի հասցնելով նվագախումբը: Կան խոստումնալից երիտասարդ դիրիժորներ, որոնք կշարունակեն նրա գործը: Հոկտեմբերի 13-ին, Լորիս Ճգնավորյանի ծննդյան օրը իր կրթած դիրիժորները հանդես կգան՝ ի պատիվ մաեստրոյի»:

Իսկ համագործակցությունը, ըստ Ռոբերտ Միրզոյանի, Լ. Ճգնավորյանի հետ, կշարունակվի:

ԷԼՄԻՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋՆԵՐ

Գիրք, որ տալիս է սիրելու օրինակը

Հայ ժողովուրդը նման է մի ծառի, որի արմատները մայր հայրենիք Հայաստանում են, իսկ սաղարթները տարածված են աշխարհով մեկ: Եվ, բնականաբար, կենսունակ են այն ճյուղերը, որոնք սնուցում են սնանում արմատներից, իսկ նրանք, որոնք կտրված են կենտրոնից, ի վերջո, մահվան են դատապարտվում: Սա ճշմարտություն է եւ հաստատվում է կյանքով: Հեռու չգնանք, նախկին Սովետական Միությունն կոչված երկրի տարածքում հայկական գաղութներ ենք ունեցել, ո՞ւր են: Նկատի ունեմ Կիեւի, Ռոստովի, Սոչիի, Աղլերի... հայկական հոծ զանգվածները: Վերջերս էլ գրեթե կորցրինք Աբխազիայի հայկական գաղթօջախը, որտեղ շուրջ 115 (հարյուր տասնհինգ) հայկական դպրոցներ կային: Հայրենիքը չկարողացավ թիկունք կանգնել, ցրիվ եկան: Վրաստանի հայությունն ընդհանրապես, լինելով ու գոյատեւելով մեր հարեւանությամբ, այժմ ընթանում է անկման ճանապարհով: Դեռեւս կայուն է Ջավախքը, Ախալցխայի շրջանը հայկական իր 15 գյուղերով տեղի է տալիս: Համեմատաբար կայուն է նաեւ Աջարիայի Ինքնավար Հանրապետության հայկական գաղթօջախը: Կայուն է ոչ թե մայր հայրենիքի հետ ունեցած կենսական կապերի, այլ տեղի իշխանությունների բարյացակամության շնորհիվ: Ի՞նչ կուզեմ ասել, այն, որ մոռացված է, կորուստյան կարող է մատնվել: Այս գիտակցությամբ 80-ամյա բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը գնաց Աջարիա եւ ուրախություն պատճառեց, կենսունակություն հաղորդեց տեղի հայ ազգաբնակչությանը: Կապուտիկյանից հետո հրավերով Բաթում մեկնեց Հայաստանի գրողների միության վարչության նախագահ, արձակագիր Հրանտ Մաթեւոսյանը: Եվ ահա, փոխադարձ այցով Հայաստանում է Աջարական Ինքնավար Հանրապետության մշակույթի նախարար, պետական գործիչ եւ անվանի գրող Թեյմուրազ Կոմախիձեն: Նա ձեռնունայն չի եկել: Գալու նախօրեին Հայաստան է հասել նրա հեղինակած «Բարեկամության ուղիներով» գիրքը: Կարել է ասել՝ սա մի հրաշալի, անձեռակերտ հուշակոթող է մեր ժողովուրդների հոգեւոր բարեկամության ճանապարհին: Գրքում մանրամասն տրված է ինչպես աջար ժողովրդի, այնպես էլ Աջարիայում ապաստանած հայերի կյանքն ու գործունեությունը: Առաջաբանում պարզ ասված է. «Այս գիրքը նաեւ վկայությունն ու հաստատումն է այն բանի, որ վրացիներն իրոք չեն կարող երախտապարտ չլինել հայերին, որոնք ընդունակ են տեսնելու եւ գնահատելու արժանիները... Հասարակությունը պիտի իմանա այն մարդկանց մասին, ովքեր ամբողջ հոգով սիրեցին մեր երկիրը, քաղաքը: Մեր կողմից անշնորհք արարք կլիներ մոռանալ նրանց կատարած մեծ ու բարի գործերը»:

Գիրքը մեկ այլ խորհուրդ ունի նաեւ. այն, որ պիտի աներ հայը, անում է վրացին եւ դրանով իսկ լրացնում է բացը: Կոմախիձեն եղբոր մասին խոսելու սիրո օրինակն է տալիս: Աջար եւ հայ ընտանիքների առօրյա, երբեմն էլ ճակատագրի թելադրանքով կայացած մտերմությամբ ու հարազատությամբ ընդհանրացնում է այս երկու ազգերի բարեկամությունը: Հեղինակը մանուկ ժամանակ տարացել է հայ կնոջ գրկում եւ երբեք չի մոռանում նրա բարի շունչը, գուրգուրանքն ու հոգատարությունը: Եվ նա այս գիրքը գրել է հոր տեսիլվող հոգու պատվերով, պարտի եւ երախտագիտության զգացմամբ: Այս ժողովածուն ես վկայում է, որ իրական եւ ճշմարիտ հիմքերի վրա են հայ-աջարական հարաբերությունները՝ որպես դրսեւորում հայոց եւ վրաց բարեկամության: Միայն բարեկամը կարող է այսպես ու այսման տրացավ լինել:

Հիրավի, ընթերցողն այստեղ կգտնի աջարահայ գաղութի հետ կապված ուզածդ խնդրի պատասխանը: Ամենայն բարեխղճությամբ հեղինակը ներկայացնում է իր երկրի եւ իր երկրում տեղ գտած հայության լույսը: Նա հոգու աչքով տեսնում է բարին եւ հոգիների մեջ շաղ տալիս եղբայրասիրության սերմը: Անդրադառնում է ճակատագրական պահերին, երբ մեր ժողովուրդը սատար է կանգնում մյուսին: Ներկայացնում է Մանքաշովի եւ նրա նման մարդկանց գործն ու հարստությունը, ցավում է շատերի ճակատագրերի համար: Նրա խոսքը վերաբերում է կյանքի բոլոր բնագավառներին՝ ընդգրկելով բոլոր ժամանակների բոլոր նշանավոր հայերին: Գրքի հոգեւոր կորիզը, սակայն, բարեկամության ամրապնդումն է: Այս գիրքն անդրադարձ է հայերի եւ վրացիների եղբայրասիրության: Մեծերը հերթով խոսում են միմյանց մասին, հայը խոսում է Վրաստանի, վրացին Հայաստանի մասին: Գլխավորը սերն է, այն սերը, որը վերացնում է կասկածը եւ փոխարենը սեր է ծնում: Սեջբերում անեմ խնդրո առարկա գրքում հիշատակվող Ռեւազ Ջափարիձեի խոսքից. «...Ի՞նչն է Հայաստանում ամենագլխավորը, միացյալը եւ անկրկնելին, որի շուրջ համախմբվում են մյուսները դառնալով ամբողջական կենդանի օրգանիզմ: Ամենագլխավորը բիբլիական Արարատն է՝ Մեծ եւ Փոքր Մասիսներով: Գագաթներ են հավերժական ձյունասառույցով ծածկված: Մասիսը սուրբ սար է, Հայաստանի ու հայ ժողովրդի խորհրդանիշն է, առանց որի անհնար է պատկերացնել այս փոքրիկ լեռնային երկիրը: Արարատը, որի վրա ջրհեղեղից հետո իջավ Նոյի տապանը, դրոշմված է Հայաստանի գերբին: Հայաստանում ուր էլ որ գնաս, այս սուրբ սարը շարունակ քեզ հետ է, այլիդ առաջ, երբեք չի հեռանում քեզանից: Կանգնում է, քեզ է նայում գագաթները երկինք մխրճած հսկան, որ պատրաստ է ներթափանցել հոգիդ...»:

Կարդալով այս տողերը, սիրտս ճմլվեց, խոր ցավ զգացի, որ հայն այսօր կարծես հեռանում է այս զգացումներից: Բայց հավատս արթնացավ եւ խոսեց ասվածորեն. «Որտեղ մեղքը շատացավ, այնտեղ զորությունն ավելացավ»: Ուրեմն, հուսահատվել հարկավոր չէ, հարցերը լուծվում են զորության միջոցով, զորության շնորհիվ: Հոգեւոր արթնությունը Հայաստանում առկա է:

Այսքանից հետո դառնանք վերջին շնորհավորենք աջար մեր բարեկամին, մշակույթի նախարար, գրող Թեյմուրազ Կոմախիձեին եւ ցանկանանք հոգու ու գրչի նորանոր բարի, ազնիվ պտուղներ ի շահ մեր ժողովուրդների առաջընթացի եւ հավիտենական գոյության:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Մարզական

ՀԱԽՍԱՍ

17-ամյա հախմատիստի փայլուն հաղթանակը

Հայաստանի հոբելյանական՝ 60-րդ առաջնության բարձրագույն խմբի մրցաշարի վերջին տուրը զարմանալիորեն շաս խաղաղ ստացվեց: Բավականին արագ կերպով ոչ-ոքի ավարտվեցին Գաբրիել Սարգսյան-Արսեն Եղիազարյան, Սմբատ Լպուտյան-Աշոտ Անասասյան, Արտաշես Մինասյան-Արա Մինասյան հանդիպումները: Ավելի ուշ խաղաղ արդյունք գրանցվեց նաեւ Լեւոն Առոնյան-Էլինա Դանիելյան պարտիայում: Միայն Տիգրան Նալբանդյան-Կարեն Ասրյան զույգն անգիջում գտնվեց: Այս պարտիան, հետաքրքիր տակտիկական պայքարից հետո, ավարտվեց Ասրյանի հաղթանակով:

Առաջնության վերջնական արդյունքներն այսպիսին են. 1. Սարգսյան՝ 6,5, 2. Լպուտյան՝ 5,5, 3. Եղիազարյան՝ 5,5, 4. Ասրյան, 5. Արա Մինասյան՝ 5-ական, 6. Առոնյան՝ 4,5, 7. Անասասյան, 8. Նալբանդյան՝ 4-ական, 9. Արտ. Մինասյան՝ 3, 10. Դանիելյան՝ 2 միավոր:

Այսպիսով, Հայաստանի չեմպիոնի կոչումը առաջին անգամ նվաճեց Գաբրիել Սարգսյանը: 17-ամյա միջազգային վարպետը շաս վստահ հանդես եկավ. նա 4 հաղթանակ տարավ, 5 հանդիպում ոչ-ոքի ավարտեց եւ չկրեց ոչ մի պարտություն: Գաբրիելը կես միավորով գերազանցեց միջազգային գրոսմայստերի նորման: Փայլո՛ւն հաջողություն:

Երկրորդ տեղը գրավեց առաջնության ամենափորձառու շախմատիստը՝ գրոսմայստեր Սմբատ Լպուտյանը: Նա եւս առանց պարտության անցկացրեց մրցաշարը, բայց չափից ավելի շաս (7) ոչ-ոքիներ արեց: Հաջողություն պետք է համարել միջազգային վարպետ Արսեն Եղիազարյանի գրաված երրորդ տեղը (նա երկրորդ տեղը Լպուտյանին զիջեց լրացուցիչ ցուցանիշներով): Արսենն արդեն երեք անգամ լրացրել է միջազգային գրոսմայստերի նորման, եւ շուտով այդ կոչումը նրան կշնորհվի:

Այս երեք շախմատիստները, ինչպես նաեւ 4-5-րդ տեղեր գրաված Ասրյանն ու Մինասյանը, կանոնադրության համաձայն, իրավունք ստացան հանդես գալու հանրապետության հաջորդ առաջնության բարձրագույն խմբի մրցաշարում:

Գաբրիել Սարգսյան

Իհարկե, եղան նաեւ անհաջողակներ: Դե ինչ, այդպես շաս հաճախ է պատահում:

Երեկ երեկոյան ՀՇԿՏ-ում տեղի ունեցավ առաջնության հանդիսավոր փակումը: Շեմպիոնը եւ երկու մրցանակակիրները պարգեւատրվեցին համապատասխանաբար ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալներով:

Ինչպես գիտեն մեր ընթերցողները, այս առաջնությունը համատեղ կազմակերպել էին Հայաստանի շախմատային ֆեդերացիան եւ Իրանի Իսլամական Հանրապետությունը: Այն նվիրված էր հայ-իրանական բարեկամությանը, այդ բարեկամության խորհրդանիշ Մեղրու կամրջին: Ելույթ ունեցողները՝ հանրապետական ֆեդերացիայի նախագահ, ակադեմիկոս Վանիկ Զաքարյանը, ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Մոհամմադ Ֆարհադ Քոլեյնին, նշեցին, որ առաջնությունը նպաստեց երկու ժողովուրդների կապերի ամրապնդմանը: Պրն նախագահը ֆեդերացիայի կողմից պրն դեսպանին հանձնեց ոսկե մեդալ եւ պատվոգիր:

Մրցանակները հանձնվեցին

Բոլոր մասնակիցները, իրենց գրաված տեղերին համապատասխան, ստացան դրամական մրցանակներ, որոնք սահմանել էին Հայաստանի շախմատային ֆեդերացիան եւ նրա հոգաբարձուների խորհուրդը:

Արդեն տեղեկացրել ենք, որ Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության մշակույթի կենտրոնը հատուկ մրցանակներ էր սահմանել: Ահա թե որ մրցանակը ում բաժին հասավ. մրցաշարի հաղթողին՝ Գաբրիել Սարգսյանին, լավագույն մեկնարկի համար՝ Գաբրիել Սարգսյանին, լավագույն եզրագծի համար՝ Արսեն Եղիազարյանին, ամենաբարձր արդյունք ցույց տված վարպետին՝ Գաբրիել Սարգսյանին, սեւերով ամենաբարձր արդյունքի համար՝ Կարեն Ասրյանին, ամենագեղեցիկ պարտիայի հեղինակին՝ Արա Մինասյանին՝ Առոնյանի հետ պարտիայի համար:

ՌՈԶԱՐԻ ԱՎԱԳՅԱՆ

Առաջատարը «Միկան» է

Տեւական ընդմիջումից հետո, որի պատճառն աշխարհի առաջնության ընտրական խաղին Հայաստանի հավաքականի մասնակցությունն էր, վերսկսվեց ֆուտբոլի հանրապետական առաջնության բարձրագույն խմբի մրցաշարը: Հերթական տուրը հատկանշական է նրանով, որ փոխվեց առաջատարը:

«Միկա»-«Կիլիկիա»՝ 5-3: Ինչպես երեւում է, Հայաստանի գավաթակիր «Միկան» մտադիր է լուրջ պայքար մղել նաեւ չեմպիոնի կոչման համար: Հանդիպումն ընթացավ Աշտարակի թիմի առավելությամբ, բայց առաջին խաղակեսը, որն ավարտվեց 1-0 հաշվով, գոլերի տարափ չէր կանխագուշակում: Բայց երկրորդ խաղակեսի սկզբում «Միկայի» ֆուտբոլիստները եւս 2 գոլ խփեցին մրցակցի դարպասը ու թուլացրին զգոնությունը: Դրանից «Կիլիկիայի» խաղացողներն օգտվեցին ու շուտով նվազագույնի հասցրին աշտարակցիների առավելությունը՝ 3-2: Դրանից հետո էլ շարունակվեց բաց ֆուտբոլը, որտեղ կողմերն այնքան էլ ուշադրություն չէին դարձնում պաշտպանությանը: Ի վերջո 8 խփված գոլ գրանցվեց: «Միկայից» աչքի ընկան Սամվել Նիկոլյանը (2), Սարգիս Նորդիկյանը (2), Արմեն Մարկոսյանը (1), «Կիլիկիայից»՝ Արտավազդ Քարամյանը (2) եւ Սերգեյ Աղաբաբյանը (1):

«Ձվարթնոց»-«Արարատ»՝ 1-1: Նախկին առաջատարը՝ «Արարատը», բավարարվեց ոչ-ոքիով: Այս հանդիպումն անցավ մոտավորապես հավասար պայքարում: Խաղն ավելի ակտիվ սկսեցին դաշտի տերերը: Բայց ստեղծելով մի շարք գոլային պահեր՝ «Ձվարթնոցի» ֆուտբոլիստները չէին կարողանում հաջողության հասնել: Հաշիվը բացվեց 18-րդ րոպեին, երբ Սեւադա Արզումանյանը, օգտվելով «Արարատի» խաղացողների սխալից, գնդակով բավականին առաջացավ ու կարողացավ գրավել դարպասը: Հաշիվը հավասարվեց 12 րոպե անց. Էմիլ Մեսրոպյանը հաջող փոխանցում կատարեց Տիգրան Եսայանին, որն էլ շեշտակի, բավականին գեղեցիկ հարվածով գնդակն ուղարկեց «Ձվարթնոցի» դարպասը: Երկրորդ խաղակեսի սկզբում եւս դաշտի տերերը մի քանի գոլային հնարավորություններ ունեցան, բայց նրանց չհաջողվեց երկրորդ գոլը խփել: Իսկ շուտով՝ 59-րդ րոպեին, հյուրերն իրենք կարող էին առաջ անցնել հաշվի մեջ: Արարատցի Արթուր Մինասյանը հեռահար, չափազանց հաշվենկատ փոխանցում կատարեց իր թիմակից Տիգրան Եսայանին, բայց վերջինիս դաշտի տերերն իրենց տուգանային հրապարակում վայր գցեցին: 11 մ նշանակետին մոտեցավ Արա Նիգոյանը, բայց այս անգամ նա անհաջողության մատնվեց. «Ձվարթնոցի» դարպասապահ Պավել Կասպարովը գուշակեց հարվածի ուղղությունն ու որսաց գնդակը: Խաղավարտն անցավ արարատցիների գոհունեռով, բայց այդպես էլ նոր գոլ չգրանցվեց:

«Դինամո»-«Շիրակ»՝ 1-4: Աբովյանում տեղի ունեցած այս խաղում Հայաստանի չեմպիոն «Շիրակը» որեւէ խնդիր չունեցավ: Շահելով եւս 3 միավոր՝ գյումրեցիները շարունակում են առաջնության հաղթողի կոչման հիմնական թեկնածուներից մեկը մնալ:

«Արաքս»-«Լեռնագործ»՝ 3-1: Դժվարություններ չունեցավ նաեւ «Արաքսը», որն ընդունել էր առաջնության ետնադարի թիմին: Արդեն առաջին խաղակեսից հետո հաշիվը 2-0 էր. գոլերը խփել էին Արա Հակոբյանը (11-րդ րոպեին, 11 մ հարվածով) եւ Արկադի Մինասյանը (37): Հանդիպման երկրորդ կեսում թիմերը 1-ական գոլ փոխանակեցին: Նախ աչքի ընկավ կադրացի Արմեն Սահակյանը (77), ապա՝ արարատցի Արամ Հակոբյանը (85):

Ռ. Ա.

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Միկա	18	12	2	4	33-16	38
2. Շիրակ	18	11	4	3	49-12	37
3. Արարատ	18	11	4	3	31-17	37
4. Արաքս	18	11	3	4	39-25	36
5. Ձվարթնոց	18	9	6	3	33-21	33
6. Կիլիկիա	18	4	2	12	28-41	14
7. Դինամո	18	1	2	15	14-48	5
8. Լեռնագործ	18	1	1	16	17-64	4

ՍԿԱՆՎՈՐԴ



Կազմեց է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 3. Տաշ 8. Ազիզա 9. Գուտաշիա 10. Կամ 11. Տայգա 12. Օգնական 16. Նվարդ 17. Կուրծ 20. Իշոտնուկ 21. Անան 23. Պետրոս 25. Էլբա 26. Ինսուլս 27. Ստուդիա 30. Կկու 32. Դրամա 33. Տղա 34. Արտոյս 37. Արհամարհանք 38. Տնազ 39. Տոկիո 40. Օլեգա

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1. Տախտակ 2. Լիկոր 3. Տակամ 4. Շամդալն 5. Բուրգ 6. Բազա 7. Շիվա 12. Օդին 13. Նեռն 14. Կոնֆլիկտ 15. Նեկտար 18. Ուտեստ 19. Ծորիդ 21. Ասիա 22. Ավստրիացի 24. Ալիմյան 27. Սպարտա 28. Ուստիան 29. Իլյա 31. Ռդենիք 35. Տրիո 36. Տիալ

ՆՅՈՒ ՅՈՐՔ, ՄԱԿ-Ի ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

Հայաստան-Ադրբեջան հակամարտությունը ՄԱԿ-ի ամբիոնից

Սկիզբը էջ 1

Ինչ վերաբերում է Հայաստանի ու հայ ժողովրդի դիմագրաված մյուս խնդիրներին, Ռ. Քոչարյանն անդրադարձավ օրվա գլխավոր թեմաներից մեկին՝ գլոբալիզացիայի հարցին եւ կոչ արեց կոլեկտիվ ջանքերով իրականացնել դրա առավելությունները եւ պաշտպանվել նրա բացասական հետեւանքներից: Ռ. Քոչարյանն իր ճառում, փաստորեն, 2-րդ անգամ այդ միեւնույն ամբիոնից խոսեց Ցեղասպանության մասին, որի ժխտումը Թուրքիայի կողմից, նրա ասելով, ուժգնացնում է պատմական արդարության հասնելու հայ ժողովրդի ձգտումը: «Աղաչխարանքը ոչ թե նվաստացնում, այլ վեհացնում է անհատներին ու ժողովուրդներին», ասաց Հայաստանի նախագահը եւ համոզմունք հայտնեց, որ Թուրքիայի հետ կառուցողական երկխոսությունը կնպաստի համագործակցության եւ բարիդրացիության գործին:

Շմոռացվեց նաեւ Հիսունեության պետական կրոն հռչակման 1700-ամյակը, որը շեշտում է խաղաղարարությունների միջեւ երկխոսության եւ համակեցության գիտակցումը մեր կողմից:

Ինչ վերաբերում է Ալիեւի հետ Քոչարյանի հանդիպմանը, ՀՀ նախագահի մամլո գրասենյակից մեր ստացած հաղորդագրությունը տեղեկացնում է, որ հանդիպումից հետո երկու նախագահները կրկին հավաստել են ԼՂ հակամարտությունը միայն խաղաղ ճանապարհով եւ փոխզիջումներով լուծելու իրենց պատրաստակամությունը եւ նոր ավարտված առանձնազրույցը համարել են «կարեւոր եւ օգտակար»: Նախագահ Քոչարյանը նշել է, որ թեեւ առայժմ դժվար է կոնկրետ արդյունքներ մատնանշելը, բայց նման հանդիպումները կարեւոր են եւ համբերություն են պահանջում, քանի որ դժվար է պայմանավորվել փոխզիջումների շուրջ, եւ նման հակամարտությունները հետ չեն լուծվում:

Հաղորդագրությունը տեղեկացնում է նաեւ, որ Հայաստանի նախագահը հանդիպել է Պաղեստինի վարչակազմի նախագահ Յասեր Արաֆաթի հետ՝ վերջինիս խնդրանքով: Զրուցակիցները քննարկել են արաբ-իսրայելական հակամարտության գործընթացում Երուսաղեմի կարգավիճակին առնչվող վերջին զարգացումները:

«Ազգի» ունեցած տվյալներով, նախատեսվում է Ռ. Քոչարյանի եւ ուղեկցող պատվիրակության հայրենիք վերադարձն այսօր:

Ախալցխայում կողոպտել են Բաֆու-Ստամբուլ ավտոբուսի ուղեւորներին

ԹԲԻԼԻՍԻ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հինգ զինված հանցագործներ Ախալցխայի շրջանում «Վալե» հսկիչ վրացական անցակետից ոչ հեռու (վրաց-թուրքական սահման) կանգնեցրել են ուղեւորատար Բաֆու-Ստամբուլ ավտոբուսը եւ զենքի սպառնալիքով ուղեւորներից թալանել թանկարժեք իրերը, 5 հազար դոլար եւ 28 դյուրաշարժ հեռախոս: Հեռանալով դեպքի վայրից մի քանի կիլոմետր, հանցագործները կանգնեցրել են խճուղով գնացող ոստիկանական մեքենան եւ պատանդ վերցրել մեքենայում գտնվող Ադիգենի շրջանի (Հարավային Վրաստան) ոստիկանապետին եւ վարորդին: Պատանդներին հաջողվել է ազատել միայն այն բանից հետո, երբ օդերացիային միացել են վրացական ոստիկանության ուժերը: Շերբակալվել է հանցախմբի անդամներից մեկը, մնացյալներին հաջողվել է թաքնվել անտառում: Ինչպես «Կավկազպրեսին» հայտնել է Սամցխե-Ջավախեթիի ոստիկանության պետի տեղակալ Միխայիլ Մայսուրաձեն, ձերբակալվածը, որի անունը առայժմ չի հրապարակվում, ծնունդով Վալեից է, դասալքության համար նախկինում դատապարտված:

Երկրաշարժ Թուրքիայում

ԱՆԿԱՐԱ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ազատություն: Թուրքիայի հյուսիս-արեւմուտքում գտնվող Բալըքեսիր ավանի շրջակայքում սեպտեմբերի 8-ին տեղի է ունեցել երկրաշարժ, որի հզորությունը ըստ Ռիխտերի սանդղակի, կազմել է 4,6 բալ: Զոհերի եւ էական ավերածությունների մասին տեղեկություններ չկան: Մեկ տարի առաջ այդ շրջանում տեղի ունեցած հզոր երկրաշարժի հետեւանքով շուրջ 18 հազար մարդ է զոհվել:

ARMENTEL

Հայտարարություն

Արմենտելը հայտարարում է մրցույթ՝ ձեռնարկության ՎԱՁ, ԳԱՁ, ՈՒԱՁ, ԵՐԱՁ, «Հունդայի», «Դեյվու» մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման եւ վերանորոգման համար:

Բոլոր շահագրգիռ կազմակերպությունները, որոնք ցանկանում են մասնակցել մրցույթին, պետք է ունենան պետական գրանցման արտոնագիր՝ ավտոնորոգման եւ տեխնիկական սպասարկման աշխատանքներ կատարելու վերաբերյալ:

Մրցույթի անցկացման պայմանները, ինչպես նաեւ տեխնիկական մանրամասները կարող եք ստանալ հետեւյալ հասցեով՝ Սիարոնյան 2, 6-րդ հարկ, 634 սենյակ, հեռ.՝ 28-70-66:

Առաջարկները պետք է ներկայացվեն վերոհիշյալ հասցեով մինչեւ 2000 թ. սեպտեմբերի 20-ը, ժամը 12:00

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆ

Տրակտոր

Հայաստանի մասնավոր ֆիրմաներին եւ գործարարներին հրավիրում ենք մասնակցելու Բաղդադի միջազգային 33-րդ տոնավաճառին: Մանրամասների համար զանգահարել Արայիկ Սարգսյանին՝ 55-52-78 հեռախոսահամարով:

ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒԱԳՐՈՒՄ

9 աստիճան

9.00 Հայլուր
9.20 Հիք մեթոդ
9.50 Սեզամ, բացվիր
10.20 Ինտելեկտուալ ակումբ
10.45 Օիծաղի տուն
11.30 Գ/Ֆ «Ջանգո»
13.00 Փաստագրական կինոնկար «Ավիացիայի պատմությունը»
17.00 Հայլուր
17.20 Մուսֆ
17.50 Հող եւ ջուր
18.10 Բարի ախորժակ
18.30 Պավել Անանիկյանը 7 պատասխաններում
19.00 Խորան լուսո
19.10 «Համով լոտո» (Արբանյակային հեռարձակմամբ
19.10 Ռուբինոն+)
19.45 Տեսաղարան. էստրադային երգեր
20.10 Կարծիք
20.35 Տուն-տունիկ
21.00 Հայլուր
21.40 «Լույս կամուրջ»
21.50 Պրեմիերա
22.00 Զինուժ
22.40 Փաստագրական շարք «Վերջին օրը». «Կոկո Շանել»
23.00 Բոհեմ
23.40 Հայլուր
00.00 Գ/Ֆ «Մեղուգանների տարին»

ՊՐՈՄԵԹԵՎՍ
10.00 «Բարի լույս. Հայաստան»
11.30 Սերիալ «Կնքամայրը»
18.00 Մուլտֆիլմ
18.10 Մանկական ժամ. «Նինձյա կրիաները», «Սենք հրեշակներ ենք»
19.10 Հեռուստաֆուտբոլ
19.35 Համերգ
20.00 Լաբեր
20.35 «Թիվ 1»
21.05 Համերգ
21.00 «Պահմտոցի»
21.15 Երգի պետական թատրոն
22.30 «Ընտանեկան» ակնթարթ
23.30 Գ/Ֆ «Իսկական Սակրոյը»

11.05 «Ինչպես հասնել կատարելության». Թեյփինգ Սինդի Քրոուֆորդի հետ
11.30 Մուլտֆիլմ
12.00 Տոմար
13.30 Գ/Ֆ «Անտառային ոգեմիկը»
14.30 Անհերեւակայելին իրականության մեջ
15.00 Մուլտֆիլմ
16.15 Օլյայի օրագիրը
16.30 Գ/Ֆ «Մարտի են գնում միայն ծերունիները»
18.00 Վ/Ֆ «Տարվա եղանակներ»
18.30 Հմայիլ
19.05 Չոչիկ
19.30, 21.30, 00.00 Սուրհանդակ
20.00 Մամուլի խոսնակ
20.10 Գիտաստղեր
20.30 Ընդհատակ
22.10 Գ/Ֆ «Հեռատոնում»
00.35 Ակնթարթ
00.40 Գ/Ֆ «Անսանձելին» (մարտաֆիլմ)
(Ավարտին Սուրհանդակ)

9.00, 11.00, 16.00, 19.00 Նորություններ
9.10 Հոգեւոր հովվի խոսքը. մետրոպոլիտ Կիրիլ
9.25 Սերիալ «Կուսության թիմի բոլոր ճանապարհորդությունները»
10.15 Նվագիր. հարմոն Օիրելի
10.45 «Երալաշ»
16.10 Սերիալ «Լեռնցին»
17.05 Յոթերորդ զգայարան
17.45 Մուլտայքուբեն
18.05 «Ուրիշ կյանք»
19.15 Վավ. դետեկտիվ «Հաղաղելու դեպքում գնդակահարություն»
19.45 Նշանավոր մարդկանց կյանքը
20.25 Գ/Ֆ «Անհնազանդները»
22.00 Ս. Դորենկոյի օրագիրը
22.55 Գ/Ֆ «Սինոն» (դերերում Դ. Լունդգրեն, Ֆ. Ռոբերսոն, ԱՄՆ, 1998 թ.)
00.45 Գ/Ֆ «Ռոմանտիկ անգլուհին»

8.30 Երկխոսություն ծկնորսության մասին
9.00 Գ/Ֆ երեխաների համար «Երջանկության կրկնակոշիկները»
10.30 Մուլտսերիալ «Պաոիրուսի արկածները»
11.00 Բարի լույս, երկիր
11.50 «Հայուրը մեկին»
12.35 Ինքդ քեզ ռեժիսոր
13.05 Սերիալ «Ընկերները-2»
13.35 Ոսկե բանալի
14.00 Սերիալ «Կոմիսար Ռեքսը»
15.00, 21.00 Լուրեր
15.20 Սվետլանա Տոման «Թափառախումբը գնում է երկինք» ֆիլմում
17.00 Միջազգային համայնապատկեր
18.00 Մամուլի ակումբ
19.00 Իմ ընտանիքը
20.00 Երկու ռոյալ
21.35 «Քաղաքիկ»
22.15 Ալեքսանդր Բույնովը. Նիկոլայ Սոլովովը «Լավ եւ վատ մարդիկ» ֆիլմում
00.00 Կասպեր Վան Դյենը «Շնաձկները» ֆիլմում (ԱՄՆ)
01.45 «Ֆորմուլա-1» կարգի ավտոմրցարշավի աշխարհի առաջնություն
02.55 «Կինոտոկ-2000». Բալթիկայի եւ ՍԴՀ երկրների կինոփառատոնի բացման հանդիսավոր արարողությունը

10 աստիճան

10.05 Առավոտ լուսո
10.15 Բարեւ
11.45 Շախմատ-64
12.00 Զինուժ
12.35 Մուլտսերիալ «Թզվառները» (22, 23-րդ սերիաներ)
13.30 Մարդը եւ բնությունը
14.00 Փաստագրական շարք «Մնաս բարով, XX դար. 1952 թ.»
15.00 Գ/Ֆ «Դելտայի ասպետների ուխտը»
16.30 Սերժ Լամանն Օլիմպիայում
17.00 Արծաթե բանալի
17.40 «Գանձերի կղզի»
18.10 «Բարի ախորժակ»
18.30 Կամիտալ
19.00 Եղդարձ դեռի աղագա
20.00 Անմեղության կանխավարկած
20.30 Պրեմիերա
21.00 Կիրակնորյա «Հայլուր»
21.40 Մանրամասներ
21.55 8 1/2. Գ/Ֆ «Հարսնացուն»

ՊՐՈՄԵԹԵՎՍ
10.00 Սերիալ «Կնքամայրը»
11.05 «Պահմտոցի»
11.20 NON STOP
11.30 Հնդկական կինոյի ժամ. գեղֆիլմ «Պարոն 420»
18.00 Մուլտծրագիր
18.25 Կենդանի տիկնիկ
18.50 Սիրեցիր զմիմեանս
19.05 «Civilis»
19.30 Համերգ
20.00 «Միասին+» (Միր)
20.30 «Ներեցնանք». Աստրեսիկ Ալոյան
21.00 Դասական ընտրանի
21.30 Գործարար Հայաստան
22.00 Ջազ
22.30 Գ/Ֆ «Մահը նրան սազում է»

11.05 Շեյփինգ Սինդի Քրոուֆորդի հետ
11.30 Մուլտֆիլմ
12.00 Տոմար
13.30 Գ/Ֆ «Սպանիր հրեշին»
14.45 Մուլտֆիլմ
15.15 Ի Դեմ
15.40 Վ/Ֆ «Ի. Ս. Բախ»
16.30 Մեյ-դեյ
16.50 Մուլտֆիլմ
18.00 Գ/Ֆ «Ազգային որսի առանձնահատկությունները»
19.40 Համերգ
20.30 Անուշադրության կենտրոն
22.00 Մամուլի ազատությունը Հայաստանում
23.00 Յոթ քար
23.30 Գ/Ֆ «Սալկեր»(դրամա)

9.00, 11.00, 16.00, 19.00 Նորություններ
9.10 Ծառայում են Ռուսաստանին
9.40 «Ալադին»
10.10 Վաղորդյան աստղ
11.10 Քանի դեռ բոլորը տանն են
12.05 Սերիալ «Ալֆ»
12.35 Առողջություն
13.05 Գ/Ֆ «Աննա 6-ից մինչեւ 18»
15.00 Ճանապարհորդների ակումբ
15.45 Ռուսական թանգարան
16.10 Յոթ փորձանք, մեկ պատասխան
17.20 «101 դալմաթին»
17.50 «Վինի Թուխի նոր արկածները»
18.15 Կոռուսյալի որոնումներում
19.15 Օիծաղի համայնապատկեր
19.50 «Երալաշ»
20.05 Գ/Ֆ «Ազգային որսորդության առանձնահատկությունները»
22.00 Ժամանակ
23.00 ՔՎՆ-2000 (2-րդ մաս)
00.35 Գ/Ֆ «Սատանան եւ տասը պատվիրանները» (դերերում Շ. Ազնավուր, Ա. Դելոն, Ֆրանսիա 1962 թ.)

8.30 Գ/Ֆ «Մարինա Միրաբելան Տրանզիտորիայում»
9.45 Հայրիկը, մայրիկը, ես սպորտային ընտանիք ենք
10.30 ՊՏՊ-ի փոստը
11.00 Բարի լույս, երկիր
11.30 «Անբլաց» եւ ընկ.
12.30 «Քաղաքիկ»
13.00 Ռուսական լոտո
13.40 Դասնություն
14.15 Խորհրդարանական ժամ
15.00 Լուրեր
15.20 Երկխոսություններ կենդանիների մասին
16.10 Երկիր մոլորակ
16.55 «Ֆորմուլա-1» կարգի ավտոմրցարշավի աշխարհի առաջնություն
19.00 Ինքդ քեզ ռեժիսոր
19.30 Պրեմիերա. Գնիտի Խաչատյանը «Մարտեյկա 12» դետեկտիվում (2-րդ մաս)
21.00 Հայելի
22.00 Գ/Ֆ «Վրեժխնդրություն» (ԱՄՆ)
23.50 Նիկոլայ Ֆոմանկոն. Անժելիկա Վարումը «Երկինքն աղամանդի մեջ» ֆիլմում
01.40 Իրական կինո
02.05 Վավերագրական ֆիլմ «Ռուսաստանը փղերի հայրենիք»

11 աստիճան

9.00 Երաժշտական կինոնկար «Ինչպես կատուն արհեստ սովորեց»
9.50 Մուլտֆիլմ «Շիլայի կոճիկը»
10.00 Կիրակնօրյա «Հայլուր»
10.35 Գ/Ֆ «Ամրոցը»
12.05 Երաժշտական կինոնկար «Արմինե»
12.30 Գանձերի կղզին
13.00 Հայլուր
13.20 Ժո Դասենը Օլիմպիայում
17.00 Հայլուր
17.20 Մուլտսերիալ «Թզվառները» (23-րդ սերիա)
17.45 Իմ տունը
18.00 Հեռուստասերիալ «Սանդոկանի վերադարձը»
19.00 Հենց այնպես
19.10 «Ֆուտբոլ լոտո» (Արբանյակային հեռարձակմամբ
19.10 Փաստագրական կինոնկար «Ալեքսանդր Թամանյան»)
19.35 Շրջադարձ. Մեղրի
20.00 Չեռագիր
20.35 Տուն-տունիկ
21.00 Հայլուր
21.40 Հեռուստակաստալոգ
21.50 Ինտելեկտուալ ակումբ
22.15 Կուլիսների ետեւում
22.35 Փաստագրական շարք «Մնաս բարով, XX դար. 1953 թ.»
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ճեպընթաց

ՊՐՈՄԵԹԵՎՍ
9.00 «Բարի լույս. Հայաստան»
10.20, 19.00 «Ամեն ինչ հանուն էր սիրո»
18.00 Մուլտֆիլմ
18.10 Մանկական ժամ. «Նինձյա կրիաները», «Սենք հրեշակներ ենք»
20.00 Լաբեր
20.35 Ռ. Մավիսակալյան. «Հարցեր»
21.20 Օրը
22.30 Ժամանակակից արվեստի թանգարանի նոր էքսպոզիցիա
23.05 Գ/Ֆ «Սվերը»
24.00 Լաբեր

19.05 Չոչիկ
19.30, 21.30, 00.00 Սուրհանդակ
20.00 Գ/Ֆ «Բալադ զինվորի մասին»
22.05 Գ/Ֆ «Սոռանալ Փարիզը»
00.35 Ակնթարթ
00.40 Գ/Ֆ «Թաքուն հետեւելու օգտի մասին» (դրամա)
(Ավարտին Սուրհանդակ)

16.00, 19.00, 01.45 Նորություններ
16.20 Մուլտսերիալ «Ուրվականներ որսացողները»
16.45 Աստղային ժամ
17.10 ... Մինչեւ 16 եւ բարձր
17.45 Համով պատմություններ
17.55 Սերիալ «Բաբելոնյան աշտարակ»
19.30 Կալամբուր
20.10 Գ/Ֆ «Ֆրանսիացին» (դերերում Ս. Շակուրով, Ե. Սիմոնովա, Լ. Յարմոլնիկ, 1988 թ.)
21.45 «Բարի գիշեր, երեխաներ»
22.00 Ժամանակ
23.00 Սերիալ «Հազարամյակ»
23.55 Հայացք
00.40 «Սայլ Համմեր»
02.00 Պարանորմալ երեւույթներ

7.00, 8.00, 9.00, 10.00, 12.00, 15.00, 18.00, 21.00, 00.00 Լուրեր
7.15-9.40 Բարի լույս, Ռուսաստան
7.20, 9.30 Ընտանեկան նորություններ
8.15 Մանրամասներ
8.25, 10.15 Սեւով սպիտակի վրա
8.35 ՊՏՊ-ի փոստը
10.20 Հերթապահ բաժանմունք
10.35 Մուլտսերիալ «Պաոիրուսի արկածները»
11.00 Սերիալ «Մանուելա»
12.30 Սերիալ «Սանտա Բարբարա»
13.30 Թոք-շոու «Ինչ է ուզում կինը»
14.00 Նոր «Հին բնակարան»
15.30 Սերիալ «Սեւ մարգարիտ»
16.25 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
17.25 Սերիալ «Հասարակ ճշմարտություններ»
18.30 Նաստասյա Կինսկին եւ Մայլզ Յորք «Մատանի» ֆիլմում (ԱՄՆ, 1-ին սերիա)
20.00 Սերիալ «Միրոն պատմություն»
21.30 Մանրամասներ
21.55, 00.50 Սերիալ «Հետաքննությունը վարում են գիտակները»
23.50 Վավերագրական ֆիլմ
00.30 «Լուրերից» հետո
00.40 Հերթապահ բաժանմունք

@rmineo Global Telecommunications

Ինտերնետ ծառայություններ «ԻՆՏԵՐՆԵՏ» սրճարանում: Խանջյան 50: Հեռ. 575823:

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատվեր 1318 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 8. 09. 2000 Գինը՝ 100 դրամ